

891.71.09

2-42

19 NOV 2010

ՍՈՒՐ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՊՈՒՅԿԻՆԻ

ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ԿՅԱՆՔԸ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ



154

89.77.09

5-42

ՊՆՏՐԱՏ * 1935

891.71.09

2-42

ԿՐՍՈՒՐ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պ

ՈՒՇԿԻՆԻ

ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ԿՅԱՆՔԸ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

1008 3976
38222

15



11.06.2013

14816

Պատ. խմբ. Ռ. Աթայան
Տեխն. խմբ. Տ. Խաչվանյան
Սրբագրել է Դուրյանյան

Պետհրատի տպարան
Գլավլիտ 40, պատվեր 971,
Հրատ. 3408, տիրամ 2000.

Слѣх обо мнѣ пройдет по всей
Руси великой, и назовет меня
всякъ сущій в ней языкъ.

А. С. Пушкин

Պուշկինը և հայ գրականությունը,
հայ կյանքը—հակայական թեմա չէ։
Այս դրժուկում մենք մեր առաջ նը-
պատակ ենք դրել վերահիշյալ բարդ
և պատասխանատու թեմայի հետ
կապված ու նրանից բղխող բոլոր հիմ
նական հարցերից քննության առնել
միայն այս հարցերը՝ յե՞րբ և ի՞նչ
պայմաններում ե տեղի ունեցել բա-
նաստեղծի մոտքը մեր գրականու-
թյան մեջ, յե՞րբ և ի՞նչ յերկեր են
թարգմանված նրա գրական մեծա-
հարուստ ժառանգությունից ըստ
առանձին ժամանակաշրջանների,
մինչև մեր որերը, դրադ

վելով նաև հայ հրապարակախոսների
և բանաստեղծների Պուլշկինի հան-
դեպ ունեցած վերաբերմունքի քննու-
թյամբ, հայերեն թարգմանություն-
ների պատմությունն ավելի լավ լու-
սաբանելու և ճիշտ բմբունելու հա-
մար:



Պուլշկինի բախտը հայ գրականու-
թյան մեջ կապված է յեղել այդ գրա-
կանության բախտի հետ: Յեւ մի ամ-
բողջ դար շարունակ: Բնական է և
հասկանալի, վոր այդ հարյուրամյա-
կի ընթացքում հռչակավոր բանաս-
տեղծի ստեղծագործությունը մեղա-
նում անցել է չափազանց բարդ ճա-
նապարհ: Ահա թե ինչո՞ւ, յերբ քննու-
թյան ենք առնում Պուլշկինի մեր գրա-
կանության մեջ անցած ուղին, տես-
նում ենք, վոր նրա այդ գրականու-
թյան վրա ունեցած ազդեցության
աստիճանը և նրա նկատմամբ հայ հա-
սարակական մտքի տարբեր հոսանք-
ների, գործիչների, գրողների և բա-
նաստեղծների կողմից արտահայտ-
ված վերաբերմունքը միշտ պայմա-

նավորված է յեղել հայ գրականու-
թյան կոնկրետ դրությամբ, նրա ապ-
րած կոնկրետ վիճակով, հայ գրակա-
նության զարգացման սեփական խըն-
դիրներով ու շահերով:

Մեր այս հիմնական յեղրակացու-
թյան ճշմարիտ լինելն ապացուցվում
է վոչ միայն Պուլշկինի յերկերից կա-
տարված հայերեն թարգմանություն-
ների ամբողջ պատմությամբ բոյոր
ժամանակաշրջանները միասին վերց-
րած, այլև նրանից թե յե՞րբ և ի՞նչ
պայմաններում է տեղի ունեցել բա-
նաստեղծի մուտքը հայ գրականու-
թյան մեջ:

Պետք է ասել, վոր միևնույն այս
հարցը քննության առարկա չէ դար-
ձել դեռ ևս անցյալում, մի քանի
գրականադետների և բանասերների
կողմից: Յեւ վորքան ել թերի ու ա-
նավարտ լինի անցյալում այս հար-
ցի ուսումնասիրության ուղղությամբ
կատարված աշխատանքը, սակայն ար-
դեն կտրելի չէ համանակա՞ն համա-
րել, այն յենթադրությունո, թե Պուլշ-
կինը հայ գրական գործիչներին ծա-

նոր և յեղի՛ղ դեռևս իր կենդանու-
րյան ժամանակ:

Յուրի Վեսելովսկին, մոր գրադ-
վել և ի միջի ալոց նաև Պուշկինի
յերկերի հայերեն թարգմանություն-
ների պատմության խնդրով, ողովի-
լով 1. 2. Մսերյանցի հայտնած տե-
ղեկություններից, իր մի հոգվա-
ծում՝ «**Пушкина в преддвe-
рии Азии**»¹⁾ գրում և այն մասին, թե
Մ. Եմինը, դեռ 1830-ական թվական
ներին հայերեն գրաբար լեզվով փո-
խադրել և, ի թիվս այլ ուրա բա-
նաստեղծների մի քանի յերկերի, նաև
Պուշկինի «Записар-й кий фонтан»
և «Кавказский Пленник» գրվածքնե-
րը: Վոր իրոք, Եմինը Լադարյան
ճեմարանում առանձին վերաբերմունք
և ունեցել զեպի ուրա բանաստեղծնե-

1) Տե՛ս՝ Ю. Веселовский — «Литератур-
ные очерки», Москва, 1900, էջ 402—407:

Այս հոգվածը սկզբում լույս և տեսել բա-
նաստեղծ, ծննդյան հարյուրամյակն նվիր-
ված մի ժողովածվի մեջ՝ «Пушкинский сбор-
ник» СПб, 1899 г.

ըն և հատկապես Պուշկինը, այդ
մասին տեղեկանում ենք նաև Ռ.
Պատկանյանի Եմինի մասին գրած հի
շողություններից. (Պատկանյանը,
ինչպես ինքն և ասում, աշակերտել և
Եմինին 1843—49 թ. թ. շրջանում):

«Պուշկինի և Լեոնոնթովի
գրվածքը առաջին անգամ մեղ
ծանոթացուց նա (Եմինը. Ս. 2.),
— գրում և Պատկանյանը, — չառ
անգամ հենց յուր դասի միջո-
ցին ձեռքը առնում եր նոցա շա-
րադրությունները և կարդում եր
մեղ համար, և այդ կերպով մեր
մեջ սեր և ճաշակ եր ձգում այդ
և ուրիշ ուրա հեղինակների մա-
սին»¹⁾:

Ինչպես ցույց են տալիս փաստե-
րը, Լադարյան ճեմարանում զեպի
Պուշկինի ստեղծագործությունն ու-
նեցած հետաքրքրությունը չի սահ-
մանափակվում միայն Մկրտիչ Եմի-
նով: Այդ հետաքրքրությունը զեպի

1) Տե՛ս՝ Մկրտիչ Եմինի յերկասիրու-
թյունները, Մոսկվա 1898 թ. էջ 210:

ռուս պոեզիան և դեպի Պուշկինը հատկապես դրադեսներն շրջանում այնքան մեծ և յեղեղ, վր 1840-ական թվականների սկզբում լույս և տեսնում հայերեն թարգմանությունների մի ամբողջ ժողովածու, վորտեղ դետեղված են լինում ինչպես Պուշկինի, այնպես ել ժուկովսկու, Բորատինսկու, Լերմոնտովի և Գնեդիչի գրվածքները: Այդ ժողովածուն հայտնի յե նաև ռուս բիրլիոդրաֆներին, վորոնցից Մեթուլը և Դրադանովը, ի նկատի ունենալով ժողովածուն լույս տեսնելու տարեթիվը, իրենց աշխատություններում վորտեղ են (Դրադանով) այն տեղը, վոր դրավել և հայ գրականությունը, ըստ ժամանակի առաջնություն, Պուշկինի ստեղծագործության շուրջը ծավալված միջադպին մրցություն մեջ¹⁾:

1) Ռուս բիրլիոդրաֆների ունեցած տեղեկությունների թերի լինելու հետևանքով նրանք յեղեղ եյին սխալ յեղրակացություններ: «Тифлисский листок» թերթի 1899

Վերոհիշյալ ժողովածուի մեջ, ինչպես այդ մասին իմանում ենք շատ ստույգ աղբյուրներից¹⁾, Համադասյանը դետեղել և Պուշկինից թարգմանված հետեյալ յերկերը՝ «Русская». «Земля и море», «Не дай мне Бог» «И путник усталый», «С то-

թ. 120-րդ համարում ապագրվում և մի հոգված, (Վեսելովսկու ասելով Արզար Հովհաննիսյանի հոգվածն և այդ), վորտեղ հոգվածաղիքը մի շարք բոլորովին նոր, սուս բիրլիոդրաֆներին անհայտ տեղեկություններով, աշխատում և լրացնել Պուշկինից հայերեն կատարված թարգմանությունների ցանկը:

Դրադանովի աշխատությունը տես՝ «Исторический вестник», 1899 թ. № 5—6 II. Д. Драганов—Пушкин в переводах.

1) Գիրքը Յերեանում գտնել չկարողացանք: Չգտնվեց նաև Վաղարշապատի մատենադարանում, Թիֆլիսում: Հավանական և, գտնվի Լադարյան ճեմարանի ստացված, սակայն դեռևս չմշակված գրադարանում:

бою древле, о, всеильный», «Прок-
ок» «Похоронная песнь», «Сло-
вей», «Туча» և «երջապես «Кавказ».

Բնորոշ և վոշ միայն թարգմանու-
թյան համար Յմինի և Համադասա-
յանի Պուշկինի յերկերից կատարած
ընտրությունը: Հետաքրքրական և
նաև այն, վոր Պուշկինը հայ ընթեր-
ցողին ներկայանում էր դրաբար
թարգմանությամբ: Այս դեպքում
Պուշկինը հայ ընթերցողի համար
մնում էր յոթ փականքով փակված
դադանիք: Ճիշտ կյիսի ասել, վոր
այդ ընթերցողն այն պայմաններում
գոյություն ել չուներ: Մեզանում
ոռւս բանաստեղծը հայ զրադեսների
սակավաթիվ խմբից դուրս չի ել ճա-
նաչիւթ¹⁾:

1830—40—ական քվականներին,
պատմականորեն և կուլտուրապես

1) Մ. Մխանարյանցն իր «Քնար հայ-
կական»-ում (Ս. Պետերբուրգ 1868) տեղ է
տվել նաև Համադասայանի թարգմանու-
թյուններին: Վորպես որինակ բերում ենք
լերմոնտովից կատարված մի թարգմանու-

հետամնաց, կղեր-ավատական մոխի
տիրապետության շրջանում, ուս-
գրականության մեջ Պուշկինը պա-
րարտ եող գտնել չեր կարող:



Մական այլ եր ընդհանուր դրու-
թյունը 1850—60—ական թվականնե-
րին:

Դեռ 40—ական թվականներին «աչ-
խարհարարականների» և «զրաբարա-

թյուն. (Պուշկինը «Քնար»-ում բացակա-
յում է).

Եղևին

Ի սահման Հիւսիսոյ ի վերայ լեռնակին
կանգնեալ կայ Եղևին միայնակ.

Եւ ներհէ՛ տատանեալ, և ի ձիւն

ցրտադին

Զդեցեալ դերթ ի քաջ սպիտակ:

Եւ երազ տեսնե՛ յանապատ ի երկրի:
Ուրանօր արեղակըն ծագի,

Միայնիկ և տրտում ի վերայ ջերմ
ժայռի

Արմաւոյ սիրուն ծառ մի ծաղկի:

կաններին միջև տեղի ունեցող պայ-
քաբը յերբեմն ստանում եր սուր բը-
նույթ: Հայտնի յե այն կրքոտու-
թյունը և ծրագրային այն մտածո-
ղությունն այս հարցում, վոր ունե-
ր Սաչատուր Արովյանը: Բուրժուա-
կան-աղբայնական լիբերալ տարրերի
զարգացման ու աշխուժացման հետ
միասին աշխարհաբար լեզվի և աշ-
խարհիկ կուլտուրային անցնելու
պահանջն ստանում եր վորոշակի ար-
տահայտություն: Աշխարհաբարը հաղ-
թանակում եր: Յեւ 60-ական թվա-
կաններին տեղի ունեցող այսպես
կոչված համաղբային վերածնունդը
հայ բուրժուական-լիբերալ ինտելի-
գենցիայի «վերածնունդն» եր: Յեւ-
ներով սեփական գոյության շահե-
րից, հետապնդելով իր ունֆորմատո-
րական գործունեյության խնդիրնե-
րը, հրահրելով աղբայնական դադա-
փարախոսությունը, այլ ինտելիգեն-
ցիան, այլ խնդիրների հետ միասին,
առաջ եր քաջում նաև ոտար դրա-
կանություններից ոգտվելու և աղբ-
վելու խնդիրը, մշակելով իր հատուկ
թարգմանական գիծը, վորպես ստո-

րադաս, յենթակա գիծ սեփական
հայացքների և անելիքների ընդհա-
նուր սիստեմի մեջ: Հասարակական և
գրական կյանքում տեղի ունեցող
նշանակալից այս պրոցեսները, պարզ
ե, վոր անցյալ տասնամյակների հա-
մեմատությամբ մեծ չափով յայ-
նացնում եյին թարգմանական դրա-
կանության հորիզոնները՝ ամբողջա-
պես պայմանավորված հայ բուր-
ժուական ինտելիգենցիայի գործունե-
յությամբ և հիմնված կուլտուրական
նոր տարրերի, աշխարհաբար լեզվի
վրա:

Սակայն մեծագույն սխալը թույլ
տրված կլինի, յեթե ասենք, վոր հայ
հասարակական ու գրական կյանքը
սկսվում և վերջանում եր լիբերալ-
բուրժուական ինտելիգենցիայի գոր-
ծունեյությամբ:

Ունենալով իր տարածայնություն-
ները պահպանողական կղերամտական
բանակի հետ, լինելով լիբերալ հա-
կադրության մեջ այլ բանակի դեմ,
բուրժուական ինտելիգենցիայի թարգ-
մանական գիծը տարբերվել և պա-

սղանդակաւնների և մանր-բուրժուա-
կան դեմոկրատական գրողների գր-
ծից: Իսկ յեթե այս ամենից բացի ի
նկատի ունենանք այն չափազանց
կարեւոր գործերը, վոր հայ մուս-
վորական շրջանները գործում եւրո-
Ռուսաստանի կենտրոններում, ոտւս
գրական հոսանքների հետ ունեցած
չփման մթնոլորտում, հասկանալի
կլինի, թե ի՞նչ պայմաններում եր-
տեղի ունենում բուն գրականութեան
զարգացումն ընդհանրապէս և գրան-
նպաստելու յեկող թարգմանականը
մասնավորապէս:

Թե վորքան մեծ ե լինում վերջի-
նիս նշանակութիւնը որիդինալ գրա-
կանութեան համար, այդ յերևում ե
նաև այն բանից, վոր մի քանի հայ
բանաստեղծներ, վոչ միայն 60-ա-
կան թվականներին, այլև հետագա-
յում, փոխանակ թարգմանելու, փո-
խանակ սեփական ստեղծագործու-
թիւնից բացի կամ նրա կողքին
թարգմանական յերկ տալու, շտա-
պում եյին առաջին հերթին փոխա-
ռութիւն կատարել, շտապում եյին
մղում ստանալ ոտար, սակայն իրենց

ստղական ու ընդունելի գրողի այս
կամ այն յերկից, առանց անգամ
նշելու սկզբնաղբյուրը: Տաք մըր-
ցութեան ասպարեղ գուրս յեկած
սրտները, իրենք իրենցը չունենալով
շտապում եյին ուրիշից ստանալ ո-
րինակը, յենթարկել վերջինս փոփո-
խութեան ու կեղծիքի՝ ներքին կա-
րիքներին դոհացում տալու համար:
Այդպէս եյին վարվում, ինչպէս ա-
ռացինք, մի քանի բանաստեղծներ:
Հասկանալի յե, վոր նույնը չի
կարելի ասել ամբողջ կարող սրտոնե-
րի մասին, վորոնց մոտ թարգմանա-
կանը չեւ ծածկում որիդինալ ստեղ-
ծագործութիւնը:

Այսպէս ահա, Պուշկինը 30—40-ա-
կան թվականներին մեր գրականու-
թեան մեջ մուտք գործելուց և մինչև
50—60-ական թվականները կյանք
ունենալուց հետո, այժմ կանգնած
եր հետեւյալ հարցերի առաջ՝ ի՞նչ եր
լինելու նրա վիճակը, ի՞նչ տեղ եր
բռնելու նա բոլոր այն յեւրոպական
ու ռուս սրտոնների ու գրողների շար-
քում, վորոնք ողնութեան եյին կանչ-
ված հայ գրականութեան կողմից:

Յուրի Վեսելովսկու վերահիշյալ հոդվածում՝ «Поэзия Пушкина в преддверии Азии» գրված և այն մասին, վոր արդեն 1850 թվին Գաբրիել Պատկանյանի «Արարատ»-ում տպագրվել է «Գնչուներ» պոեմից մի հատված, հավանորեն Ռ. Պատկանյանի թարգմանությունը¹⁾։

Բայց Պուշկինով այդ շրջանում ավելի շատ հետաքրքրվել է Ս. Շահադիդը։ Նույն Վեսելովսկուն ուղարկված նամակի մեջ Շահադիդը գրում է այն ամենից ուժեղ տպավորության մասին, վոր ստացել էր նա Պուշկինից և լեթմոնտովից։ Շահադիդի ասելով Պուշկինով նա չարունակ տարված է յեղել, համարել է նրան բազմակողմանի ճշմարիտ բանաստեղծ արվեստալետ, վորի ստեղծագործությունը պատկերացել է նրան դրախտային գեղեցիկությամբ փայլատալող սքանչելի ծաղկած մի պարտեզ...

1) («Արարատ»-ի այդ №№ էջնեկու պատճառով այս տեղեկությունը ստուգել վարդապետը)։

Շահադիդն ընդունում է, վոր նույնիսկ «Լեվոնի վիշտը» պոեմի վորոշ մասերում կարելի չե գտնել «Յեվկենիյ Ոնեգինի» (մասամբ նաև «Գրաֆ Նուլին»-ի) ազդեցության հետքեր։ Շահադիդը Վեսելովսկուն հայտնում է սեփական ստեղծագործական այն մտահղացումների և մրտահոգությունների մասին, վոր պատճառել է նրան Պուշկինը տարիներ չարունակ, վորից նա ազդվել է և այդ ազդեցությունը կարելի չե տեսնել նրա մի շարք բանաստեղծություններում¹⁾։ Մոսկվայում 1860 թ. լույս տեսած նրա «Աղատության ժամեր» վոտանավորների ժողովածուի մեջ նկատելի չե այն յեկույթը, վոր բանաստեղծը մեծ ցանկություն է ունեցել նմանվելու ռուս ու յեվրոպական պոետներին, ընդորինա կելու նրանց քնարական ժանրերը և հորինելու «ըստ յեղանակին» արդեն

1) Տե՛ս Յուրի Վեսելովսկի «Литературные очерки», «Армянский поэт Шах-Азиз и «Русское влияние в современной армянской литературе» աշխատությունները։

1898 3976
38222



դոյություն ունեցող յերդերի: Նույն
այդ դրքում Շահադիդը առանձնակի
հետաքրքրություն է հայտարարել
դեպի Պուշկինը: Բայց վոչ միայն
այդ դրքում: Հարց է ծագում՝
ինչպես է հասկացել Պուշկինին Շա-
հադիդը, աղգվելով նրանից պահպա-
նե՞լ է արդյոք իր սեփական դեմքը,
թե՞ վոչ: Այո՛, Շահադիդն ունեցել է
իր հատուկ մոտեցումը դեպի Պուշկի-
նը և ըստ այդմ ել վարվել է Պուշկի-
նին ողտադուրձելու բոլոր դեպքե-
րում: Հիշատակենք ցայտուն սրինակ
ներից մեկ-յերկուսը: Բացի «
ЯНТАРЧОЙ» և այլ բանաստեղծու-
թյուններից, «Հյուսիսափայլի» 1864
թ. հունիսի ամսատետրում տպագրե-
լած իր «Պոեմը» բանաստեղծու-
թյունը, Շահադիդը դրել է Պուշկինի
«ПОВТУ» բանաստեղծության ուղղա-
կի նմանությամբ:

Պուշկինը դրում է՝

Поэт! Не дорожи любовью на-
родной,
Восторженных похвал пройдет
минутный шум;

Услышишь суд глушца и смех
толпы холодной,
Но ты останься тверд, спокоен
и угрюм.

Շահադիդը՝

Պոե՛տ, հեռո՛ւ կայ ծախից
ամբոխի,
Յերբ քեզ տիրում է
վողեորություն,—
Նա մա՛նր ցնորք է մի հիվանդ
սրտի,
Մի խախտ՛ւտ խելքի
թելադրություն:
Դու պաշտոնյա ես վերին
սրբության,
Վոր նվիրել ե աստված
աշխարհին,—
Դու պիտի հերքես
հասարակության
կանխամուտ կարծիք, դու
սաստես չարին:

Բայց այս նմանությունը ցույց է
տալիս ինչպես ընդհանուրը, վոր կա
Պուշկինի և Շահադիդի միջև, այն-
պես ել տարբերությունը: Հետադա

տողերի մեջ Շահադիզը հանդես ե
 գալիս միանգամայն ինքնուրույն գա-
 ղափարններով՝ հակառակ Պուշկինի
 այդ բանաստեղծության մեջ արտա-
 հայտված տրամադրությունը և մրտա-
 քերին: Կարելի չէ ասել, վոր Շահա-
 ցիզը, բանաստեղծին ընդունելով
 իրրե մի «սաշտոնյա վերին սրբու-
 թյան»՝ այսինքն մղում ստանալով
 Պուշկինից, գալիս է միևնույն ժա-
 մանակ չեղոքացնելու Պուշկինին, այդ
 պիտով նմանությունը դարձնելով
 խիստ անհետևողական, արտաքին,
 և բոլորովին այլ բովանդակու-
 թյամբ: Ուրիշ կերպ ել լինել չեք կա-
 րող: Այդ վերով Պուշկինից Շահադի-
 զը չեք դիմադրելում իրեն: Այս է
 պատճառը, վոր Պուշկինը Շահադիզի
 փոխադրությամբ ու ոգտադործումով
 կորցնում է իր իսկական դեմքը, նա
 «հայացվել է», փոխադրվել պատ-
 մական մի այլ հողի վրա, գրական
 մի այլ միջավայր՝ յենթարկվելով
 լիբերալ-բուրժուական պոեզիայի
 ներկայացուցիչներից մեկի՝ Ս. Շա-
 հադիզի դատակարգային «քմահա-
 ճույքներին» ու պահանջներին:

Ոգտադործման նույնպիսի որինակ
 կարող է ծառայել Պուշկինի «[○] K
 я-тарный» բանաստեղծության նը-
 մանությամբ զրված Շահադիզի յեր-
 զը, վորտեղ ուռւ բանաստեղծի՝

Вы, Геликона
 Давни жрецы!
 За Апполона,
 Пойте, певцы!

Իմաստը ստացել եր այս արտահայ-
 տությունը՝

Առեք բաժակներ
 Ուրախալի,
 Լցնենք ի նըվեր
 Մեր հայ աղբի:

Կեցցե՛ն, յերգեցե՛ք,
 Հայ աղջիկներն,
 Կեցցե՛ն, հնչեցե՛ք,
 Հայ զավակներն:

Տեսնում ենք, վոր «ինքնանպատակ
 և մաքուր» պոեզիայի ներկայացուցիչ
 Պուշկինը մերժում է ստացել տեն-
 դենցիոզ - աղպայնական Շահադիզի
 կողմից: Առանց այն ել միակողմանի
 հասկացված Պուշկինը հայ բուրժուա-

կան գրողներին յերկերում յենթարկ-
վում եր այլակերպության:

Այդ ե ասում նաև «Հյուսիսափայ-
լի» թարգմանական քաղաքականու-
թյունը, «Հյուսիսափայլի» մոտե-
ցումն ընդհանրապես զեպի յեվրո-
պական ու ռուս ժողովուրդների զը-
րականությունները: Հիշատակենք
թեկուղ նրա վերաբերմունքը հանդեպ
Լերմոնտովը, յերբ 1863 թվին, դեկ-
տեմբերի ամսատետրում տպագրվեց
Լերմոնտովի «Դեմ»-ի Սաղաթյանի
տաղանդավոր և հայ թարգմանական
գրականության մեջ դարալուիս կազ
մող թարգմանության մի մասը, վո-
րին առաջնորդող ծանոթության մեջ
Հրատարակողը, ի միջի այլոց, գրում
եր հետևյալը՝

«Ասենք իսկույն մեր հայկական
ընթերցողին, վոր Միքայել Լեր-
մոնտովը յուր բոլոր բանաստեղ-
ծական աստարեղի մեջ հանդի-
սանում ե մեր առաջև իրրև Ալեք
սանդր Պուշկինի հավասարակշիռ
հաջորդը, կամ թե մանավանդ
նորա վաստակակիցը: Յեվ Լեր-

մոնտովի վախճանը յեղավ նույն-
պես, վորպես յեղել ե Պուշկինի
վախճանը:

... Պիտի ասել, թե Լերմոն-
տովի բանաստեղծություններն ե՛-
լիրև նմանողություն Բայրոնի
բանաստեղծության, ե առավել
աղատ, առավել ինքնիշխան և ա-
ռավել այրական խոսքը, վոր
Ռուսաստանը խոսել ե մինչև այ-
սոր աշխարհի հրապարակում:
Լերմոնտովի բանաստեղծական
պաշտոնն եր ի աղատ, առանձ-
նավոր, բարձրադահ հոյու պա-
տերաղմ ընդդեմ մի անողոքելի
ինքնակալության, վոր կամեր
մեծ ու փոքր հավասարել մի-
մյանց և անտարակույս այս աղա-
տաղաց Ռուսի հուսահատությու-
նը դեմ հանդիման Յարի բռնա-
կալությանը, եր արդարացի և
հիմնավոր, քան թե անդլիական
լորդի հուսահատությունը դեմ
հանդիման յուր աշխարհի վոր-
պիսությանը»:

Քննադատությունը, «Հյուսիսա-
փայլից» բավականին ել ուշ նկատել

ե, վոր Լերմոնտովը մեղանում համեմատաբար ավելի չներմբնունելությունն է գտել, քան թե Պուշկինը: Այս դիտողությունը այնքան էլ սխալ չէ: «Հյուսիսամիայլը» որինակի վրա տեսնում ենք, վոր նա փաստորեն պակասավոր ըմբռնելով Պուշկինի դերն ու նշանակությունը, Լերմոնտովին եր տալիս առաջնության դափնին, կրքոտությամբ ընդդէյով «Դեմ»-ի հեղինակի «ազատ, ինքնիշխան, աշխատանք» խոսքը, վոր «Ռուսաստանը խոսել է մինչև այսօր աշխարհի հրապարակում»: Այդ մի քայլ եր «Հյուսիսամիայլի» կողմից, վոր պետքի հետ մղվի միակողմանի ճանաչման Պուշկինը և նրա փոխարեն դրմատելով Լերմոնտովին, տեսնել վերջինիս մեջ «բարձրագուհ հոգու պատերազմ ընդդէմ մի անողորմելի ինքնակալության»: Իհարկէ կեղծում եր «Հյուսիսամիայլը» Ռուսաստանի պատմությունը, միայն Լերմոնտովին վերագրելով այն «ինքնիշխան ու ազատ» խոսքը, վոր մինչև այդ արտասանել եր Ռուսաստանը: Լերմոնտովից առաջ հենց նույն Պուշկինը

պակաս արժեքավոր «ինքնիշխան ու ազատ» խոսք չէր ասել Ռուսական ինքնակալության մասին: Սակայն այդ առթիվ քար լուծթյուն է պահպանում «Հյուսիսամիայլը»: Նա իրեն անտեղյակ է ձևացնում նաև Լերմոնտովից ել այն շատ ավելի ուսուցիչ մտքի ներկայացուցիչներին Ռուսաստանի դրության և ապագայի մասին ասած խոսքին, քան Լերմոնտովի խոսքն եր:

«Հյուսիսամիայլը» Պուշկինի հարցում ըստ յերևույթին դռնվում եր 60-ական թվականներին Ռուս իրականության մեջ դեպի բանաստեղծը մշակվող քննադատական տեսակետի աղղկոցության տակ նրա փոխարեն իր հետաքրքրության շրջանակների մեջ առնելով այլ բանաստեղծների, դրոշներին ու հրապարակախոսների:

Առաջ մղելով լիբերալ-բուրժուական «կապիտալիզմի զարգացման պրոուսական ճանապարհի զաղափարախոսությունը», «Հյուսիսամիայլը» խմբագիրը վորոնում եր այնպիսի դեղարվեստագետների, վորոնք ամեն կարգի նախնական վերամշակման

յենթարկվելուց հետո, կարող էլ ինն-
յին սաղական դառնալ իր դարձմունքն
ու վերելքն ապրող հայ աղջայնա-
կան-բուրժուական մտքի ներկայա-
ցուցիչների խոսքին ու գործին:

«Հյուսիսափայլը» չի ճանաչել նաև
Շեքսպիրին: 1861 թվի նոյեմբերյան
ամսատետրում տպագրված Շեքսպիրի
«Վենետիկցի վաճառականի» բովան-
դակության ուսմի ամսագրից
վերցրած հասարակ չարագրություն-
ներ— գրան ապացույց: Ավելի միա-
միտ մոտեցում հանդես է Շեքսպիրը
գեթվար ե յերեակայել:

Սակայն վորսլիսի վուկնորությամբ
ե խոսում նրա խմբագիրը «Թշվառ
«Մեղու»-ի վոչնչությունը գիտակե-
ցած ապադա հայտնի թարգմանիչ Գ.
Բարխուդարյանի մասին, վորը «ցու-
ցանելով յուր մեջ առողջամիտ դա-
ղափարներ» (Նաղարյան) յեկել եր
խմբագրից խնդրելու, տեղ տալ «Հյու-
սիսափայլ»-ի եջերում նրա Շիլլերից
կատարած թարգմանություններին:
Յեւ Նաղարյանի կարծիքով թարգ-
մանիչը «ջերմ ու տաք սիրով զգացել
ե դերմանական բանաստեղծի հետ»:

Սրանք պակաս արժեքավոր նյու-
թեր չեն, վորոնք իրենց հերթին դա-
լիս են բնորոշելու «Հյուսիսափայլ»-ի
թարգմանական քաղաքականություն-
ներ: Ռուս գրական գեմքերից մեծա-
րելով Լերմոնտովին, «Հյուսիսա-
փայլ»-ը յեվրոպական դժական հան-
ճարներից բնորոշում եր ուղմանտիկ
Շիլլերին: Նա հետ ե Բրեյլ, կամ ա-
վելի ճիշտ չի բմբռնել մեծագույն
ուսալիստ-դրամատուրգ Շեքսպիրին:
Վորքան անսաղական եր «Հյուսիսա-
փայլ»-ի համար Շեքսպիրն իր անա-
ղարտ վիճակում, նույնքան սաղական
եր նրան յուրովի մեկնարանված,
«հայացված», «աղղայնականացված»
ուղմանտիկ Շիլլերը:

Թե իսկապես ինչքան միակողմանի
ե աղքատ ե ճանաչված յեղել Պուշ-
կինը «Հյուսիսափայլ»-ի եջերում,
այդ յերևում ե նաև Գ. Բարխու-
դարյանի թարգմանություններից,
վորոնք նրա թարգմանական դործու-
նեյության մեջ շատ չնչին տեղ են
բռնում: (Յերեկի պատահական չե,
վոր այդ այդպես ե):

Ամսագրի 1860 թվի 6-րդ համա-
րում Բարխուդարյանը տպագրում է
Պուշկինի յերկու բանաստեղծութիւն
ները՝ «Ո՛հ, իմ յերջանիկ» և «Այո՛,
այո՛, սիրում եյի ձեզ»։ Բերենք այդ
թարգմանութիւնները.

1.

Ո՛հ, իմ յերջանիկ որեւրը
Շատ շուտով անցան,
Յեւ իմ քաղցր յերազները
Յ(°) հանկարծ ցրվեցան:

Անողորմ բախտի չար ձեռքից
Ճակատիս պսակը
Թառամեցավ, ուրախութենից
Ձուրկ է իմ կյանքը:

Անողնական, անբարեկամ,
Միայնակ ու տրտում
Ապրում եմ, և ամենայն ժամ
Վախճանիս սպասում:

Այսպես, չորացած տերեւը,
Ծառի վրա մնացած,
Դողում է, մինչև ցուրտ ձմեռը
Կը թափե նորան ցած:—

2.

Այո՛, այո՛, սիրում եյի ձեզ
Ձերմ ու անսահման սիրով,
Յեւ կարելի չէ, դեռևս
Այրվում է սիրտս այն հրով...

Բայց յես ձեզ վռչինչ բանով
Ձեմ կամենում տխրեցնել,
Վոչ իմ դուր դանդաղեցրով
Ձեր սիրտը խռովեցնել:

Յես ձեզ այնպես եյի սիրում,
Այնպես քնքուշ, բոցալից,
Ինչպես աստծուց եմ խնդրում,
Վոր դուք սիրվեք ուրիշից¹⁾:

Շահադիդ, «Հյուսիսափայլ», Գ.
Բարխուդարյան—սրանցով միայն չի
սահմանափակվել Պուշկինի հանդեպ
1860-ական թվականներին արտա-
հայտված վերաբերմունքը:

¹⁾ Նույնը տես՝ Գ. Բարխուդարյան—Բա-
նաստեղծութիւններ, 1897, Թ. Ֆիլսո, էջ 122, —
123:

Պուչկինը չի վերսկսել նաև պայծառ Նալբանդյանի ուշադրութիւնը: Վերջինիս բանաստեղծութիւններն ինամբոս ուսումնասիրութիւնը հետաքրքիր աղբյուր կարող է հանդիսանալ պարզելու Նալբանդյանի ինտելեկտուալ-սոցիալական հետաքրքրութեան շրջանակները: Զուրկ միանգամայն որիդինալ բանաստեղծ լինելու հատուկ կարողութիւնից, Նալբանդյանը, այնուհանդերձ դիտակցելով պոեզիայի, հրապարակախոսական, ուժեղ խոսքի պոեզիայի անհրաժեշտութիւնը, սակաւաթիւ յիշատանալորներէ մեջ դրել է իր արշուներ, կրքերը, միտքն ու փոթորկալից ներքին աշխարհը: Դեռ 1850-ական թիւականներին նա հետաքրքրութիւն է ցույց տալիս հանդէպ պոեզիան, ընդորինակելով ու նմանութիւնով հայ, ռուս և յեմբոսական, իրեն շնորհունակի, պոետներին ու ողտադործելով նրանց առանձին ստեղծագործութիւնները¹⁾:

¹⁾ 1850—60-ական թ. թ. ընդորինակելու

Յեւ այդ հետաքրքրութիւնը տարածվել է նաև Պուչկինի վրա:

և նմանվելու սովորութիւնն այնքան է տարածվում հայ բանաստեղծների մեջ, վոր շատ դեպքերում չի մատնանշվել թե ո՞ւմ են նրանք ընդորինակել, ի՞նչ յերկ: Այդ դեպքերից հիշատակենք միայն մեկը: «Հյուսիսափայլ»-ում 1858 թ. տպագրված է Կոմս Նմանունի (Նալբանդյանի) մի թարգմանութիւնը՝ «Վայր ընկնող աստղեր»: «Մեղու Հայաստանի» 1867 թ. յերրորդ համարում տպագրված է մի բանաստեղծութիւն «Աստղեր» վերնադրով— «նվեր Մ. Ն.-ի հիշատակին» և ստորագրված է «Գ. Թ.» շ: Հավանարար Մ. Ն.-ն Միքայել Նալբանդյանն է: Դուրս է գալիս, վոր Նալբանդյանի թարգմանութիւնը մեկ ուրիշի կողմից նվիրվում է Նալբանդյանի հիշատակին: Իսկութիւնն այն է, վոր Գ. Թ.-ն, պահպանելով «Վայր ընկնող աստղեր»-ի ձևը, վոճը, ստրկորեն հետեւելով որինակին, բովանդակութեամբ իր բանաստեղծութիւնը հարմարեցրել է «այն մարդու հիշատակին, վոր միտ անկեղծ ծառայել է յուր աղիլին»: Նույն «Վայր ընկնող աստղերն» ողտադործել է նաև Հ.

1850-1854 թ.թ.) Նալբանդյանը
Թարգմանում է Պուշկինի «Кавказ-
ский Пленник»-ից մի հատված՝
«Զերբելի յերգը» (ընթերցում ենք յեր-
կու ութնյակ) :

Գետը վաղում է կատաղած
Ու խրոտված հորձանքով,
Սարերի մեջ ահա հողնած
Քնեց զինյորը դիչերով.
Թիկն տվեց նա պոդպատն
Յուր նիզակին պսպղուն,
Զինվոր, մի՛ քնիլ դու մութ
Ժամին,
Մոտըդ չեչեն կա զարթուն :

Լող է տալիս նա մակույկով՝
Ուռկան ձգած գետի տակ,

Թումանյանը, սակայն բոլոր դեպքերում չի
հիշատակվել բուն հեղինակը՝ Բերանտեն...

2) Տես՝ Մ. Նալբանդյանի յերկերը, հա-
տոր II. Ռոստով Դոնի վրա, 1903 թ. էջ 41
և 26—27: Նույնը նաև «Հանդես գրականա-
կանում և պատմականում» :

Զինվոր, գետի մեջ խեղդվելու
Քեզ էլ սպասում է վտանդ.
Ինչպե՞ս խեղդվում են յերեխայք,
Շող որերին լողալիս,
Են կողմումը քո թշնամի
Տե՛ս, չեչենն է ման դալիս :

Նույն ժամանակաշրջանում Նալ-
բանդյանը Պուշկինի 1827 թվին գը-
րած «Պոետ» բանաստեղծության նը-
մանությամբ հորինում է իր «Բա-
նաստեղծ» վոտանավորը : Հետագայ-
քրական է նաև այս յերկու գրվածք-
ների համեմատությունը :

Պուշկինը գրում է՝

Пока не требует поэта
К священной жертве Апполон,
В заботах суетного света
Он малодушно погружен;
Молчит его святая лира;

Նալբանդյան՝

Քանի բանաստեղծն չունի
մուսայից
Մի բան յերգելու հատուկ
հրրաման,

Նորա քնարը միշտ մունջ ե
մ'սում,
Ինքը անհոգի, անզոր ու
անճայն:

Հրաշալի մղում ստանալով Պուշկի-
նից, հետևյալ տողերում՝ Նալբանդ-
յանն ել ավելի ուժգին ե հնչեցնում
նրա տրամադրությունն ու միտքը՝
հասնելով մինչև հատարակական
պարտականությունը խորագես դե-
տակցող ողողիցիոն պոետին վայել
յեղրակացությունների: Մինչդեռ
Պուշկինի բանաստեղծության մեջ
պոետը փախչում է՝

На берега пустынных волн
В широкошумные дубравы...

Նալբանդյանը բանաստեղծի անևի-
թի մասին ահա թե ինչ ե ասում՝
Վոչինչ դատավոր, վոչինչ
իրավունք
Ձեն ալիքան սուրբ, ճիշտ, ջինջ,
քան հայելի,
Վորքան դատաստան
բանաստեղծ հոգուն

Մի բան ասելում թե՛ չար, թե՛
բարի:

Վողջ մինն ե նորան՝ յեթե
քագակիր,
Յեթե սոսկական քաղաքացի լոկ.
Պատճառը ուղիղ խոսելից հետո
Պետք ե սպասել դռնալու
մերկ, բոկ:—

Մարտադաշտում նվիրված պայքա-
րելը հանուն ճշմարտության— այս ե
բանաստեղծի պարտականությունը:
Սա արդեն Պուշկինի ստեղծագործու-
թյան այնպիսի ողտադործում ե, վոր
նման չեք վո՛չ Շահադիդի ե վո՛չ ել
հետադաշում արված փոխադրու-
թյուններին: Նաչբանդյանը, թեև
վորոշակի վոչինչ չի ասում բանաս-
տեղծի անելիքների կոնկրետ բովան-
դակության մասին, սակայն այս
հանգամանքը չի խանդարում տարբե-
րել նրան Պուշկինին ազգայնականո-
րեն վերամշակողներից: Նալբանդյա-
նը սոլյալ դեպքում գերծ ե դրանից:
Ահա թե ինչպես եր նա ողտադոր-
ծում ուսա բանաստեղծին:

Հնարավոր է, վոր բացի 1860-ական թվականներին Պուշկինից կատարված վերոհիշյալ թարգմանություններից ու ընդորինակումներից, լինեն դեռևս չստուգված և մեղ անհայտ նյութեր: Սակայն անկախ դրանից, դիտենք, վոր Պուշկինով դրադվել է նաև հայ պահպանողական մամուլը: 1862 թվին «Կոռնիկ հայոց աշխարհին» ամսագրում և Բաղրատունու (Ստեփանեյի) թարգմանություններ լույս է տեսել Պուշկինի «Եխո» բանաստեղծությունը: «Մեղու Հայաստանին» (1867 թ. № 43) տպագրել է «Պուշկինի չարագրությունը Ժլատ ատպետ»: Միևնույն «Մեղու»-ի մեջ (1867 թ. № 18) լույս է տեսել «Բանաստեղծին» («Поэту») վոտանավորը՝ Յերվանդ Տեր-Դավթյան Ոճնեցու թարգմանություններ:

Ասել, վոր 1850—60-ական թվականներին, աշխարհաբարի հաղթանակի շրջանում, Պուշկինը մեղանում ակրապետեց, չենք կարող: Յեթե Շահազիզի վրա նրա ստեղծագործություններ իր աղբեցություններ

է գործել և Շահազիզը Պուշկինին ավելի մոտ է զգացել, քան Գ. Բաբխուզարյանը, քան հատ ու կենտ ալ թարգմանիչներ, դեռ այդ ամենը մեղ հիմք չի կարող ծառայել սրնդելու թե հրապարակախոսական հայ բուրժուական միտքը պատրաստ էր գրկարաց ընդունելու Պուշկինին: Պատմական այդ պայմանների ջուղտույտի մեջ ընկած Պուշկինը քիչ էր նկատելի «Հյուսիսարևելի» և ուրիշ հայ որդանների, հրապարակախոսների ու սաղմատենչ աղբայնական գրողների ու բանաստեղծների համար: Նրանց համոզմունքով Պուշկինը չափազանց աննշան ու չնչին դեր կարող էր խաղալ իրենց՝ այսօրին հայ բուրժուական ինտելիգենցիայի առաջ կանդնած սեփական խնդիրները լուծելու գործում:

Պուշկինի յերկերի բացարձակ ողտադորման և նրա ստեղծագործությունների իղեյական բովանդակությունների աղավաղման ու հայկական նա-

ցիոնալիզմին համարատարանեցման
 սովորութիւնը հասնում է մինչև
 անցյալ դարի 70—80-ական թվա-
 կանները: Այդ տեսակետից չափա-
 զանց բնորոշ է բանաստեղծի հայտնի
 «Памятник» վոտանավորի նմա-
 նությամբ Բաղրատունու (վարդա-
 պետ Սորեն Ստեփաննի) դրած «Ար-
 ձան» վոտանավորը՝ տարգրված «Հայ
 կական աշխարհ»-ում 1874 թ. №№
 1—2: Նմանութիւնն այնքան սուրը-
 կորեն է կատարված, վոր Արգար
 Հովհաննիսյանը և Յուրի Վեսելով-
 սկին իրավունք են համարել «նմա-
 նությամբ» դրված նացիոնալիստա-
 կան արեղիայի այդ «գոհարը» կոչել
 թարգմանութիւն: Մեր կարծիքով
 թարգմանութիւն է առաջին չորս
 տողը, սակայն ի՞նչ անուն տալ
 Բաղրատունու «Արձանին» ամբողջու-
 թյամբ, յերբ Պուշկինը հայերեն
 «Թարգմանութիւն» մեջ հանդես է
 դալիս «սուր Հայաստանի» դադա-
 փարախոսի դերում:
 Պուշկինը դրում է՝

Слух обо мне пройдет по всей
 Руси Великой,

И назовет меня всяк сущий в
 ней язык,
 И гордый внук славян, и фини
 и ныне дик'ой
 Тунгуз, и друг степей калмык.

Բաղրատունի՝

Իմ համբավըս կը լսե մայր իմ
 սուրբ Հայաստան,
 Յեւ Հայկական լեզուներ իմ
 անուն կտան:
 Յերկար չի դադարի Հայկյան
 ազդ ինձ սիրել,
 Վոր բարի ըզգացմունք դիտելի
 զարթեցնել,
 Վոր ազնիւ մտքերով ոգտավետ
 էյի յես
 Ընկածին փրկութիւն կանչեցի
 մշտապես:

Խեղճ Պուշկին, կարո՞ղ էր յերբեկ-
 ցե յերևակայել:

Վորքա՞ն մեծ է Պուշկինի և Բաղ-
 րատունու միջև ընկած մտքի տարա-
 ծութիւնը:

Զարմանալի յե, սակայն փաստ է,
 վոր մինչեւ այժմ հայ ընթերցողն իր

ձեռքի տակ չունի Պուշկինի «Ճանապարհորդութիւն դեպի Արզրում» գրվածքի լրիվ և քիչ թե շատ տանելի թարգմանութիւնը: Ասում են, վոր դեռևս 1840-ական թվականներին Մ. Եմինը Լազարյան ձեմարանում դրադվել և այդ գործով: Ստույգ մեզ վոչինչ հայտնի չէ: 1883 թվին «Բաղմավեալը» թարգմանեց այդ գրվածքը, բայց փանական մոսկովութիւնն սպանել և Պուշկինի արձակի պարգոթիւնը: Հետագայում լույս տեսած առանձին հատվածներ վոչ մի դադարիար տալ այդ յերկի մասին ի վիճակի չեյին:

Արդար Հովհաննիսյանի մեզ արդեն ծանոթ հոգվածում հիշատակութիւն կա այն մասին, վոր «Դաստիարակ» ամսադրում տպագրվել և «Բախչիսաբայի չատրվանը» պոեմի թարգմանութիւնը:

Բայց վորպէս ուշադրով թարգմանութիւն դեռ չի կորցրել իր արժեքը Դ. Աղայանի Պուշկինի «Վոսկե ձրկնիկ» հեքիաթի 1884 թվին լույս տեսած ազատ թարգմանութիւնը: Նույն

թվականին տպագրված և արեմտահայ պարբերականներից մեկում արտատպված Պուշկինի նույն հեքիաթի Ռ. Պատկանյանի թարգմանութիւնն, անչուշտ, Աղայանի թարգմանութիւն հետ մրցել չի կարող:



Մեր դրականութիւն մեջ տեղի ունեցող նշանակալից պրոցեսների հետ միասին 1890-ական թվականները զուգադիպեցին Պուշկինի ծննդյան հարյուրամյակի տոնակատարութիւնը: Հայ դրականութիւնը թեւադրել էր արդիւնաբերական կապիտալիզմի չրջանը: Դասակարգային խոր շերտաւորում, ազգայնական իդեոլոգիայի ծայրահեղ հրահրում, դրակառնութիւն զարգացման նոր ետապինչպէս պրոդայի, այնպէս էլ պոեդիայի և դրամատուրգիայի ասպարիդում: Լայնացել եյին թարգմանական դրականութիւն հորիզոնները, առաջացել դրոդների, հրապարակախոսների ու պոետների նոր սերունդ՝ կնարված նոր պատմաչրջանի, դատար

կարգային պայքարի նոր ետապի հետ: Հենց այդ չրջանում հայ պարբերական մամուլը, հրատարակչական ընկերությունները, բանաստեղծներն ու հրապարակախոսները, քննադատներն ու թարգմանիչները շտապեցին այս ու այն կերպ մասնակցություն հանդես բերել Պուշկինի ծննդյան հարյուրամյակի տոնակատարությունը՝ ամեն մեկը յուրովի, ըստ իր զաղախարական դիրքի ու ըմբռնողության:

Բայց այս աշխատանքը ծավալվեց ավելի շուտ տասնամյակի վերջում: Մինչ այդ, յերբ 1889 թվին հանդես եկավ «Մուրճը», Արասխանյանը, յեղներով «Հայ ազգը ուսումնասիրելով՝ նորա շահերը պաշտպանելու» իր ցանկությունից, նպատակ եր դրել «Մուրճ»-ի դրական բաժնում «հյուրընկալել զբեթե բացառապես մեր ինքնուրույն գրողների գործերը» Ա. Դավեն դալիս «Մուրճ»-ի բանաստեղծները, ամսագրի մեջ տպագրվում են մեր քաղաքագիրների ու գյուղագիրների յերկերը, աշխու-

ժացնում ե հայ քննադատական միտքը: Յեվ հիրավի, թարգմանական յերկեր սկզբի տարիներին «Մուրճ»-ի մեջ քիչ տեղ են բռնում: 1890 թ. 5-րդ համարում տպագրվում ե Պուշկինի «Брожу ли вдоль улиц шумных» բանաստեղծությունը՝ Կրասիլներիայանի թարգմանությամբ: «Մուրճի» եջերում, այնուհանդերձ, Պուշկինից շատ ավելի հաճախ են տպագրվում Հայնեյի ու յեվրոպական այլ պոետների յերկերից հայերեն թարգմանություններ: Յեվ այդ չնայած խմբագրի ժլատ թարգմանական քաղաքականությունը: «Մուրճ»-ն իր ընթերցողներին սկսում ե ծանոթացնել նաև ռուս և վրացի արձակագիրներին հետ: Նորից աշխուժանում ե Լեոմոնտովը: Տպագրվում ե Հ. Սենկևիչից: Միայն յերեք տարի անց «Մուրճ»-ի եջերում նորից յերևան ե դալիս Պուշկինը՝ «Ո՛ր, վարդ աղջիկ», «Բաղձանք», «Բանտարկյալ» և «Փոթորիկ» բանաստեղծություններով՝ այս անգամ արդեն Ա. Դավա տուրյանի թարգմանությամբ: Թեև

դնալով մեծանում է «Մուրճ»-ի մեջ
 թարգմանվող հեղինակները թիվը
 (Գյոթե, Լերմոնտով, Գի դե Մոպա-
 սան, Հ. Զուլեբրամ, Համսուն և
 այլն), սակայն 1895 թ. առանձին
 աշխուժացում էր բերում Պուշկինի
 շուրջը: Տպագրվում է նրա «Յես-
 կարծում եյի», «Բլրոլ» բանաստեղ-
 ծությունները (թարգմանություն Ա-
 լեքսանդր Մատուրյանի), իսկ նույն
 տարվա տասներեկուերորդ համա-
 րում լույս է տեսնում «Ժլատ աս-
 պետ»-ն ամբողջությամբ (թարգմա-
 նություն Հ. Տել-Գեվորգյանի): 1897
 թվի վեցերորդ համարում, դարձյալ
 Հ. Տել-Գեվորգյանի թարգմանու-
 թյամբ, տպագրվում է «Այադակ յեդ
 բայրներ» պոեմը ամբողջությամբ:
 Հետևյալ տարին, կրկին նրա թարգ-
 մանությամբ, լույս է տեսնում Պուշ-
 կինի «Պարտալա» մեծ պոեմը (№
 10—11), վրի տպագրությունը չա-
 րունակվում է 1899 թիվ № 1,
 2—3: Բացի թարգմանություններից,
 Պուշկինի ծննդյան հարյուրամյակի
 առթիվ լույս են տեսնում Ս. Լիսից-

յանի աշխատությունը՝ «Ռուսաց
 դրական ուղղությունները» վերտա-
 նությունամբ և այլ նյութեր: Այս առ-
 դեն աշխուժություն էր:

Վոր, իսկապես, Արախանյանն ու-
 նեցել է իր հատուկ տեսակետը թարգ-
 մանական ղրականության մասին, այդ
 ցույց է տալիս այն բանով, ինչ, վոր
 «Մուրճ»-ի եջերում (1899 թ. №
 4—5) մղել է նա Ա. Զոսյանյանի դեմ:

«Զեր (Ա. Զոսյանյանի. Ս. Հ.)
 հասկացողությամբ թարգմանու-
 թյունը պետք է կազմի մի գրա-
 կանության, մանավանդ մի ամ-
 սադրի ամենաեական մասը,—
 դրում է Արախանյանը:

Մինչդեռ թարգմանական գրա-
 կանության մեջ դուք վոճ զար-
 դացնելու միջոց եք տեսնում,
 մենք դեռ այդ թարգմանական
 ղրականությունը նախ և առաջ
 ապրի կրթության ոճամբով մի-
 ջոց ենք ընդունում: Մեր հա-
 յացքների մեջ այդ մասին ահա-
 դին տարբերություն կա... Զեդ
 համար կարելի չէ ասել, թե Ժո-

դովուրդ չէա, այլ կա «գրա-
դետները» դաստիարդ. մեզ հա-
մար թարգմանական գրականու-
թյան խնդիրը մի բարդ խնդիր է,
վորի վրա արժե առանձին մտա-
ծել, նորա համար ծրագիրներ
պատրաստել, այդ ծրագիրները
քննադատության առարկա դարձ-
նել: Ամսագիրը, ուրեմն, վոր-
պես առհասարակ, նաև թարգ-
մանական գրականության նկատ-
մամբ վոչ այնքան իբր շտեմա-
րան պիտի ծառայի, վորքան
գրդիչ և ուղեցուց ռդան. յուր
հրատարակած թարգմանական
վեպերը, գրույցները, դրամանե-
րը պետք է ունենան գրդիչ կող-
մեր, նայած քերքի դիտավո-
րություններին յուր ժամանակ-
վա սերնդի և գրականության
նկատմամբ: Ամսագիրը վոչ այն-
քան գրականությունը հարստաց-
նելու յե դալիս, վորքան մտքեր
պատրաստելու ու գրականու-
թյունն ուղիղ ճանապարհի վրա
դնելու, այն հարստացնելու ու-

ղին հարքելու համար: Այսոր, ո-
րինակ, գլխավորապես «Մուրճի»
չնորհիվ, բավարար չափով հայ
գրականությունն ունի: Լեւոն-
տով և Պուշկին, բայց «Մուրճ»-ի
վաստակը այս դեպքում ամենե-
վին այն չէ, վոր նա Պուշկին և
Լեւոնտով տվեց հայ գրականու-
թյան, այլ այն, վոր մի դժվար
գործի համար մի թարգմանա-
կան ուժ առաջ մղեց, վորը, յե-
թե չլինեք «Մուրճ»-ը— հալա-
նական է, վոր ասպարեզ չգար և
կամ չճանաչվեք հասարակու-
թյունից, կամ վերջապես գրկված
մնար կատարելագործվելու հա-
մար անհրաժեշտ հանգամանք-
ները»: (Առաջին ընդգծումը
մերն է, յերկրորդը հեղինակին՝
Ս. Հ.):

Արարխանյանի կարծիքով «Ա-
մեն մի ամսագրի գլխավոր ար-
ժանիքը պետք է վորոնել ուղ-
ղության և ինֆնուրույն գր-
վածքների մեջ, և վոր մի դրա-
կանության դիրը նորա ինքնու-
րույն եյությամբ է վորոշվում,

և վոր, հետեապես, նաև հայոց
գրականութեան մեջ ելականը,
դնահատելին, թե՛ հայերի և թե՛
ամբողջ մարդկութեան համար,
նորա ինքնուրույն ստեղծարար-
ծութիւններն են, արտահայտ-
ված հրապարակախոսութեան,
բանաստեղծութեան ամեն ժանրե-
րի, գրական ու գիտական քննա-
դատութեան ամեն կարգի հետա-
դոտութիւնների և ուսումնա-
սիրութիւնների մեջ»։ (Ընդ-
դժումը Արասխանյանին)։

Պարզ է, վոր Արասխանյանը, ցած-
կանալով զարկ տալ հայ արդի գրա-
կանութեան զարգացմանը, ղեկավար-
վելով վորոշ սկզբունքներով, թարգ-
մանական գրականութիւնն, յենթար-
կելէ՝ իր հիմնական նպատակներին։
Փորձարիտ Չոպանյանի դեմ տար-
ված այս բանալիէն ցույց է տալիս,
վոր Պուշկինն ու Լերմոնտովն ան-
գամ Արասխանյանի համար ինքնա-
նպատակ մեծութիւններ չեն յեղել։
Նկատելի չէ, թե յերբեմն նույնիսկ
վորքան սահմանափակ է Արասխան-
յանի մոտեցումը հանդեպ թարգմա-

նական գրականութեանը։ Սակայն
մի գրութիւն չափազանց ակնհայտ
է՝ «Մուրճ»-ի խմբագիրը վարել է
միանշանմայն գիտակցված, իրեն կող-
մից լիարտաւորված քաղաքականու-
թիւն՝ ոռոս և յեւրոպական գրա-
կանութիւնների թարգմանութեան
գործն իր դասակարգային-դադարա-
րական նպատակադրմանն յենթարկած
լինելու համար։ Հատկապես Պուշկի-
նի յերկերի մասին արտահայտվելիս
տեսանք թե ի՞նչ է յեղել Արաս-
խանյանի մոտեցումը դեպի այդ
հեղինակը և թե ի՞նչից ղրդված նա
տպագրել է ոռոս պոետի յերկերի
հայերեն թարգմանութիւններն իր
ամսագրի մեջ։

Թարգմանութեան խնդիրը զբաղեց-
րել է վոչ միայն Արասխանյանին,
այլ նաև այն ժամանակվա հայ հրա-
պարակախոսական և քննադատական
մտքի զանազան ներկայացուցիչնե-
րին։ Արտահայտվում է նաև «Լու-
ման», վորի ղեկրում (1899 թ. գիրք
ը.) Ա. Ծատուրյանի բանաստեղծու-
թիւններին նվիրված վերլուծական

հողվածով հանդես ե գալիս Հ. Ճա-
ղարբեղյանը:

Վերջինս, ավելի քան Արասիան-
յանը, անդրադառնալով պատմական
մոտ անցյալին, ընդհանրացնելով
հարցը, 19-րդ դարի հայ թարգմա-
նական գրականության առաջացումն
ու զարգացումը սերտորեն չադկա-
պում եր «ազգային դատի» հետ: Վե-
րոհելով հողվածով Ճաղարբեղյա-
նը գրում ե՝

«Արվեստը արվեստի համար»
տեսությունը մեզ համար մի ան-
հասկանալի, յեթե կուզեք նույն-
իսկ ծիծաղելի պահանջ ե: Ամեն
ինչ, այդպես ե՝ գրականությու-
նը, այդպես ե՝ նրա բանաստեղ-
ծական ճյուղը կյանքի վրա ազ-
դելու, հառաջադիմության մղե-
լու, բարոյապես բարձրացնելու
գործին պիտի ծառայեն:

Ինչո՞ւ համար Պուշկինին թո-
ղած, մենք առաջ Լեոմոնտովին
ենք ուշով ու համակրությամբ
վերաբերվում. ինչո՞ւ մեր նշա-
նավոր ազգային բանաստեղծ-
Գամառ Փաթիկյան ուսուսկան

քնարերգության մեծագույն ներ-
կայացուցիչներին թողած՝ նեկ-
րասովիցն ե թարգմանություն-
ներ ու նմանողություններ տա-
լիս:

Ինչո՞ւ մենք անտես ենք անում
Գյոթեյին և իրար յետևից թարգ-
մանում Շիլլերի վոդերգու-
թյուններն ու անհաղ կարդում:
Պատճառը վերոհիշյալ յերեմյույ-
թի մեջն ե: Թշվառության բա-
ժակը ժողովրդի հետ քամած լի-
նելով, մեր գրողները վաղ հա-
կացան, վոր առնվազն անհար-
մար ե՝

В годину горя,
Красу долин, небес и моря,
И ласки милой воспевать.

Ազգայնական շեփորահանդեսի
գուրս յեկած հայ բուրժուական գր-
ողները միանդամայն հասկանալի
պատճառով պետք ե մերժելին «ար-
վեստը արվեստի համար» դեկադեն-
տական տեսությունը: Ծաղարբեղյա-
նը վոչ միայն հստակ և ճիշտ պատ-
կերացում չունի պատմության մա-

սին, նա աղավաղելով հայ գաղափար-
դային գրականութեան անցած ու-
ղին, քողարկել է նաև այն յերևույ-
թը, վոր վո՛չ Լեւոնտովը, վո՛չ
Պուշկինը, վո՛չ առավել ևս Շիլլերն
ու Նեկրասովը, վոչ մեկը սրանցից,
վորոնք ոգտագործվել են հայ աղ-
գայնական գրողներէ կողմից, իրենց
միանգամայն հարադատ և նման գը-
րողները չունեցին այդ հեղինակներէ
չըջանում և հետեապես նրանց նման-
վելով, հայ գրողները նմանութեամբ
գրված այդ գրվածքներէ մեջ գը-
րել են իրենց սեփական լոյսն-
դակութեանն ու դատարարդային վո-
ղին: Այն, ինչ ընդունելի յեր ոտար
գրականութեանց հայ աղգայնական
գրողներէ համար, այդ ամենը մեղա-
նում աղավաղվում էր, ստանում էր
նոր դեմք, նոր բովանդակութեան՝
հարմարվելով նացիոնալիզմի պա-
հանջներին:

Յեթե չափազանցութուն և ճա-
ղարեգյանի այն միտքը թե «Պուշկի
նին մոռացել են», ապա «Լումա»-յի
մասին այդ կարելի յե ասել: Համե-
մատած «Մուրճ»-ի հետ «Լուման»

կարծես թե ավելի շուտ ձեռնագ-
մնաց Պուշկինի նկատմամբ, բանա-
տեղծի ծննդեան հարյուրամյակին
նվիրված հորեկանական տոնակատա-
րութեաններին իր եջերում տարգը-
լով կենսադրական մի փոքրիկ հոդ-
ված, «Ջրահեղձը» և «Թե աղմկալից
փողոցում եմ շրջում» յերկերը Հա-
րութեան թումանյանի թարգմանու-
թեամբ ու մի քանի այլ նյութեր:

«Տարադը» 1890 թվին 9-րդ համա-
րում տարագրում է Գ. Աստվածա-
տըրյանի (Գեղորդ Ասատուրի) թարգ-
մանած Պուշկինի «Գնչուներ» պոեմը:
Այնուհետև 1895 թվին № 2, լույս
է տեսնում մի հատված «Ճանապար-
հորդութեան դեպի Արցրում» գըր-
վածքից: Բանաստեղծի ծննդեան
հարյուրամյակը բավականաչափ ար-
ձագանք է դառնում «Տարադ»-ի եջե-
րում: Համարյա թե պարբերաբար
«Տարադ»-ը տեղեկութեաններ և տը-
պագրում Պուշկինին նվիրված տոնա-
կատարութեաններէ մասին, լույս
ընծայում թարգմանութեաններ, տը-
պագրում Այվազովսկու նկարները,

վորոնց թեման հանդիսանում է Պուշ-
կինը, զանազան այլ նյութեր:

Մի համար ամբողջապես նվիր-
վում է մեծ բանաստեղծի հիշատա-
կին: «Տարազ»-ի եջերում տպագրե-
վում են Պուշկինի այս յերկերը՝ «Ար-
ձան», (Թարգմանություն Ջավադ
Բալուդյանի), «Կովկաս» (Թարգ.
Հար. Թումանյանի), «Պոետը»
(Թարգ. Ոսոփրիոս Անուփյանի):
Խմբագրությունն իր ընթերցողներին
միաժամանակ տեղեկացնում է այն
մասին, թե ի՞նչ արձագանք եր գտել
բանաստեղծի ծննդյան հարյուրամ-
յակը մի շարք դավառներում: Սա-
կայն աչքի ընկնող դործ, բացի այդ
ամենից, վոր ձեռնարկեց «Տարա-
զը» — այդ «Աղբյուր Տարազ»-ի հրա-
տարակությամբ լույս ընծայված Ժո-
ղովածուն է՝ կազմված Պուշկինի
հայ թարգմանություններից: Այդ
ժողովածուն մեջ մտնում են հետևի-
յալ յերկերը՝ «Յես արձան եմ կանգ-
նեցրել» (Թարգ. Ջավադ Բալուդյա-
նի), «Ջրահեղձը» (Թարգ. Հովհան-
նես Թումանյանի), «Մի յերդիր չը-
նաղ» (Թարգ. Հար. Թումանյանի)

և վերջապես «Գնչուներ» (Գ. Աստ-
վածատրյանի Թարգ.):

Հատկապես յեռանդուն աշխա-
տանք է տանում հայ լրերալիզմի
որդան «Մշակը»: Հաջորդաբար, մի
քանի տասնյակ համարներում «Մշա-
կի» խմբագրությունը տպագրում է
առաջնորդող հոդվածներ, քննադա-
տական թերթիկներ, բաղմաթիվ և
բաղմապիսի տեղեկություններ տո-
նակատարությունների մասին, ինչ-
պես Ռուսաստանի կենտրոնական քա-
ղաքներից, այնպես ել Կովկասից և
Անդրկովկասից: Պուշկինի ծննդյան
հարյուրամյակի առթիվ «Մշակ»-ը
հրահրում է զանազան, հայ դրակա-
նության և հայ զբոսի մշակներին վե-
րաբերող հարցեր ու խնդիրներ, տըր-
վում են զանազան առաջարկություն-
ներ: Տեղեկությունները և հոգված-
ները դրվում են տարբեր թեմաների
մասին՝ կազմված Պուշկինի հեռ-
նկարչություն (Այվազովսկի, Վ.
Սուրենյան), յերաժշտություն, հրա-
տարակչություններ, գրական ֆոնդ,
մատենագրություն և այլն: Նույն

«Մշակ»-ը տպագրում է «Կիրճալի»-
Պուշկինի արձակ յերկերից մեկը Տ.
Հովհաննիսյան թարգմանությամբ։
Սակայն այդ ամբողջի մեջ առանձնա-
պես աչքի յե ընկնում—Ա. Ծատուր-
յանի «Նամակներ Մոսկվայից» մեծ
հոգվածաշարքը՝ նվիրված Պուշկին-
ին, Ռուսաստանում նրա շուրջը դո-
յություն ունեցող հետաքրքրության
և հարուցվող հարակից խնդիրնե-
րին։

Բացի կենտրոնական քաղաքներում
դանիոդ հայ մամուլից, Պուշկինի
ծննդյան հարյուրամյակին արձա-
դանքում է նաև դավառական տպա-
գրությունը։ 1895 թվին Ալեքսանդ-
րապոլում (այժմ Լենինական) լույս
է տեսնում Պուշկինի նշանավոր ար-
ձակ յերկը՝ «Կապիտանի աղջիկը»-
Հարություն Կարապետյանի թարգ-
մանությամբ։

1899 թվին լույս է տեսնում Մ.
Լիսիցյանի աշխատությունը՝ «Պուշ-
կին—կյանքն ու գործունեություն-
նր» վերնագրով, վորը բանաստեղ-

ծին նվիրված առաջին քիչ թե չառ-
սիատեմատիկ շարադրությունը լինե-
լով հայ գրականության մեջ, իր դա-
ղալարական ու տեսական կողմերով
չեր բարձրանում ժամանակի պաշտո-
նական պահպանողական մտքի մա-
կադրակից։

Ի՞նչ տպավորություն է գործում
Պուշկինի ծննդյան հարյուրամյակը
հայ գրական գործիչների վրա։

Տեսանք թե ինչ չափի յեր հասել
«Մուրճ»-ի, ճաղարբեղյանի, «Լու-
մա»-յի, «Տարազ»-ի, «Մշակ»-ի դե-
պի Պուշկինն ունեցած հետաքրքրու-
թյան աստիճանը։ Բոլոր դեպքերում
եւ անխտիր չափազանց թույլ է յե-
լել հայ քննադատության կատարած
աշխատանքը Պուշկինի ստեղծար-
ծության վերլուծության գործում։
Բանաստեղծի ստեղծագործության և
կյանքի շատ ու կարևոր կողմերը
բոլորովին անտես են առնվել հայ
մամուլի կողմից։ Հայ բուրժուական
աղգայնական, պահպանողական—հե-
տադեմական մամուլն իր սովորական
«դիտական» տոնը չեր կամեցել փո-

խել: Սնցյալի քննադատական միտ-
քը չի զբաղվել և չէր ել ցանկանում
զբաղվել այդ հարցերով, թե ի՞նչ է
յեղել Պուշկինի վերաբերմունքը դե-
պի կովկասյան ժողովուրդները, դե-
պի ցարիզմի դադուխային քաղաքա-
կանությունը, թե ի՞նչ բովանդակու-
թյուն եր դրված «համադրային» կոչ-
ված Պուշկինյան տոնակատարու-
թյունների մեջ՝ միապետության,
բուրժուական հասարակարգի տի-
րապետության սլայմաններում: Լը-
ռությունը յերևի համաձայնության
ու մտքի տկարության նշան պետք է
համարել:

Իսկ Պուշկինի ծննդյան հարյու-
րամյակն աշխուժեցնայի՞լ հրահրեց
«աղբային» մի քանի հարցեր: Ծա-
տուրյանը «Մուրճ»-ում տպագրված
իր հոդվածի մեջ, ի միջի այլոց,
գրում է հետևյալը՝

«Հանձինս Պուշկինի, այսօր
դրիչը տոնում է իր փառալու-
հալթանակը մի բաղամիլիոն
աղբի մեջ: Պատիվ այն ժողո-
վորդին, վրբ ընդունակ է հաղթ-

վելու գրչի ուժից, ընդունակ է
վոգևորվելու սրտի խոսքով, ըն-
դունակ է զլուխ խոնարհելու
բարի տաղանդի առաջ:

... Այո՛, մենք չենք սիրում
վո՛չ մտքի մարդուն, վո՛չ գրչի
մշակին. չենք սիրում վո՛չ գիրք,
վո՛չ դրականություն, վո՛չ մա-
մուլ: Մենք սիրում ենք հայ
գործչին և շատ ենք սիրում,
միայն վո՛չ մահից առաջ, վո՛չ
ել մահից հետո: Մենք սիրում
ենք նրա թարմ դադաղը, սի-
րում ենք միայն նրան թաղել,
սիրում ենք հուղարկավորու-
թյան հանդեսներ: Թաղո՛ւմ,
փառալո՛ր թաղում— ահա՛
յերբ է մեր սերը հասնում կա-
տարյալ գծության: Գնա՛ մե-
ռիր— արի թաղեմ, միայն թա-
ղեմ, թաղեմ փառալո՛ր...»:

Հոդվածադիրը, ի հարկե, ճիշդ չի
թափել խորասուզվելու յերևույթնե-
րի խորքը: Սակայն բուրժուական
հասարակարգում հայ գրողի ապ-
րած վիճակի մասին պատկերացում

ստանալու համար, նրա հոգւածը
վորոշ նյութ կարող է մատակարար-
ել: Ահա «աղղային» այն հալիտե-
նական, սակայն միշտ իր թարմու-
թյունը պահպանած հարցերից մեկը,
վերը կրկին և տասնյակ անդամներ
արծարծվում եր հայ մամուլի մեջ:

Յեթե հայ հրապարակախոսութեան
և ընդհանրապես դրական դործիչնե-
րի շրջանում Պուշկինի ժառանգու-
թեան պնդատուութեան հիմնական
հարցում յեղան բանաստեղծին պաշտ
պանողներ, կիրառւ չափ պաշտպա-
նողներ, ձեռնպահ մնացողներ, յե-
թե կային մարդիկ, վորոնք, ինչպես
որինակ Արասխանյանը, ծաղարբեղ-
յանը իրենց ղեպի Պուշկինն ունե-
ցած վերաբերմունքը հիմնավորում
եյին հայ դրականութեան, հայ աղ-
ղայնական պոեզիայի զարգացման
չահերով, աղա չենք կարող անաե-
սել այն տեսակետը, վորը դալիս եր
միանգամայն բացասելու Պուշկինի
դերն ու նշանակութիւնն ինչպես
մայրենի, այնպես ել ոտարազդի դը-
րականութիւնները համար:

Այս մի մտայնութիւնն եր, վորի
ճաղումը յեթե վորոնեկու լինենք,
պետք է դիմենք ուսն հասարակական
մտքի պատմութեանը, բայց վորը
չնայած վերջինիս հետ ունեցած հա-
րադատ կապերին, ինչպես յերևում
է, մեր իրականութեան մեջ ևս հող
է ունեցել և դարձյալ կապված յե-
ղել տեղական խնդիրներ, «աղղա-
յին» միջավայրի հետ:

Մեր խոսքը պիտաբեականութեան
հայկական ուշացած արտահայտու-
թեան մասին և հանդեսը Պուշկինի և
նրա ժառանգութիւնը, վորը դրսե-
վորվել է Մոսկվայում 1897 թվին
լույս տեսած «Նոր վործ» դրականա-
կան և հասարակական հանդեսի ա-
ռաջին համարում տպագրված Հով-
հաննես Գնունու « Ինչ է կտակել
իւ աղղին Ա. Ս. Պուշկինը» հոդվածի
մեջ:

«Մեր կարծիքով,— դրում է
հոդվածագիրը,— յերեք ընդհա-
նուր յեղրականութիւնն կարելի
է դուրս բերել Պիտաբեի բն-
դարձակ հոդվածից (խոսքը Պի-

սարևի «Բելինսկի և Պուշկին»
հողվածի մասին ե. Ս. Հ.) : Պի-
սարեվը 1) հերքում է Պուշկինի
պատմական նշանակութունը,
2) սնդում, թե նրա պոեզիան
անպետք և անողուտ մի բան է
ժամանակակից սերունդի հա-
մար, վորովհետև չի կարող պա-
տասխանել նրա հանապազորդ
ամենատարրական պահանջներին,
3) ծաղրելով ծաղրում է նրանց,
վորոնք Պուշկինին համամարդկա
յին պոետ ճանաչելով, տեղավո-
րում են նրան Յելիզովայի ա-
ռաջնակարգ պոետների հետ մի
աստիճանի վրա : Չընդունելով
կրիտիկոսի առաջին կետը, մենք
յերկու ձեռքով ստորագրում ենք
նրա մյուս յերկու կետերի տակ» :

Հենց սկզբից անհրաժեշտ է նշել,
վոր Գնունին, ստրկորեն հետևելով
Պիսարևին, այնուհանդերձ, չի կարո-
ղացել խորը կերպով ըմբռնել իր ու-
սուցչի աշխատության կոնցեպցիան
և պատճառաբանությունների այն,

Պիսարևի դեմքը բնորոշող սխառմը,
վոր տեղ է գտել Պիսարևի հողվա-
ծում : Մրա հետևանքով հակապատ-
մականությամբ տառապող ուսուցիչն
ավելի քան դուհկացվել է իր «աշա-
կերտի» քննադատական լեզուակաջու-
յունների մեջ, ժխտելով Պուշկինի
«նշանակությունն ոտաբազդու մոտ»,
թեթևամտորեն ծաղրելով բանաստեղ
ծի «համամարդկային զաղափարնե-
րը», ավելի քան «յերեխայություն
համարելով ժամանակակից սերունդը
Պուշկինի դրվածքների վրա կրթե-
լը» : Գնունին հաղթաբար բացական-
չում է՝

«Մեր ժամանակը գործնական
ժամանակ է. նա անտես է առ-
նում այն ամենը, ինչ վոր աչքի
առաջ չունի ռեալական կյանքը,
իրականությունը, ինչ վոր խու-
սափում է «որվա հարցերից» :
Նա ավելորդ պարապմունք է հա-
մարում այն պարապմունքը, վոր
չի տալիս շոշափելի ոգուտ :

Յեվ կայծակ ու շանթ Պուշկինի
գլխին :

Գնունին իր հողավածում, ի հարկե, չի զբաղվել այն հարցով, թե սոցիալական ու քաղաքական ինչպիսի՞ ծրարադրով ե հակադրվում Պիսարեը Պուշկինին, վորպես 60-ական թվականներին ռազնոչինյան ռադիկալ ինտելիգենցիայի ներկայացուցիչ։ Սոցիալականն ու քաղաքականը Գնունին դուրս ե մղել։ Չի կարելի անուշադրության մասնել այն դրությունը, յերբ ե՛ ձաղարբեղյանը, ե՛ Գլունին Պուշկինին փոխաբնել են Նադսոնով, յերբ վերջինս նրանց կողմից ընդունվում ե, վորպես հայ ազգայնականությանը հոգեւոր կերակուր մատակարարող մի պոետ։ Գնունին ոգտադործում ե նաե Չերնիշևսկու հեղինակությունը, նրա կարծիքը համարում «ավելի ուղիղ ե համանական» ե այդ ամենն այն նպատակով, վորպեսզի նախապատրաստվի այս հայտարարությունը՝ թե «կդա ժամանակ, յերբ Պուշկինը կգտավի հասարակ մահկանացուների շարքին»։

Գնունու հայկական պուշկինականությունը հասնում ե այնպիսի խե-

ղացնոր չափադանցությունների, վոր հողավածադիրը Պուշկինին համարում ե «այն բանաստեղծներից, վորոնք, առանց հաշիվ տալու, կրկնում են «դեղարվեստը դեղարվեստի համար»։ իր դրվածքների ճնշող մեծամասնությունը նա դրել ե անձնական հաճույքի համար։ Պուշկինը ապրում եր զվարճանալու համար, զվարճանում եր ապրելու համար»։

«Վո՛չ ե կրկին վո՛չ, — շարունակում ե Գնունին, — Պուշկինը մեր ժամանակից շատ ե յետ մնացել, — Եւրեմն ե չի կարող ժամանակակից սերնդի դաստիարակը լինել։ Նա վոչինչ մտափոր ե հոգեւոր սնունդ չի կարող տալ իր ընթերցողներին, վորովհետեւ ինքն ել համարյա վոչինչ չունեւր։ Չուրկ լուրջ կրթությունից, զուրկ խորը զարգացումից — նա վոչ այլ ինչ եր, յեթե

резвый любимец муз и грации,
ինչպես ուղիղ անվանում ե նրան Պիսարեը։ Վո՛չ լուրջ դա՛վաբներ, վո՛չ վորոչ հայացք

էյանքի այս աւ այն յերևույթի վրա»:

Ընդհանրապես հետաքրքրական համարելով Գնունու յերևույթը անցյալի հայ քննադատական մտքի պատմութեան համար, այնուհանդերձ չենք կարող չնշել, Վոր Պուշկինի հարցում նա պատմութեանը խայտառակ կերպով ֆալսիֆիկացիայի յեր յենթարկում: Միում ստանալով իր ուսուցչից, խորացնելով նրա սխալները, Գնունին հանդես եր բերել մտածելու անկարողութիւն, չափազանց նեղ պրակտիցիզմ, և Վոր ամենից անտանելին է, Պուշկինի ապրած դարաշրջանի, միապետական, ճորտստորական Ռուսաստանի կոնկրետ դրութեան լիակատար անտեսում:

Մի հիմնական կետում ևս տաքերութիւն կա Պրասարեի և Գնունու միջև: Պրասարեը յենում եր իր «գրական կուսակցութեան» շահերից: Գնունին ցույց է տալիս, Վոր ինքը ընդհանուր շատ քիչ բան ունի այդ կուսակցութեան հետ:

«Մենք ուղեցել ենք բացել մեր հասարակութեան աչքերը, Վոր

նա այնքան ել չհափշտակվի Պուշկինի դրվածքներով. Պուշկինը նրանց վաշինչ չի տալ, յեթե տա ել շատ քիչ բան կտա, աննշան կլինի այդ տվածը և կանցնի իր գուր: Կան ավելի հետաքրքիր քերթողներ, անտարակույս ողտավետ, և նրանցով պետք է պարապել, նրանց պետք է նվիրել մեր ազատ ժամերն:

Մինչև անգամ, յեթե ուղում էք, միասից զատ Պուշկինը մեղ գրեթե վաշինչ չի կարող տալ», — գրում է Գնունին:

Յեւ նա, նկատի ունենալով «արվեստը արվեստի համար» — այս տեսութեան ու մտայնութեան ազդեցութիւնը ժամանակակից «յերիտասարդ հայ բանաստեղծների վրա» պահանջում եր չարհամարհել «հասարակական կյանքի առօրյա պիտույքները, անձնական զգացմունքը ամեն բանից բարձր չդասել»:

Գնունին ստիպված եր դառնութեամբ արձանագրել, Վոր «Գամառ-Քաթիպայի, Շահադիգյանի փայփայած իդեալները մոռացվում են»:

Վերադարձ այդ իրեաներին, հրա-
հրել աղղաշնական պոեզիան, — ահա
այն պրակտիկ յեղրակացությունը,
վորին հասել եր Պիսարեի հայ տղա-
կերտը՝ Պուչկինի դեմ ուղղված իր
ուշացած և անպտուղ մենամարտի
ժամանակ¹⁾։



Պուչկինի յերկերի ամենավորակյալ
և ամենարեղմնավոր թարգմանիչները
դարձան անցյալ դարի 80—90-ական
թվականներին հանդես յեկած հայ
բանաստեղծները։ Սրանք իրենց թարգ-
մանական աշխատանքն սկսեցին սե-

1) «Նոր փորձ»-ի և Գնունու հոդվածի մա-
սին տես՝ «Նոր-Դար» 1897 թ. № 195։ Ար-
տահայտվեց նաև Արասխանյանը։ Պատասխա-
նելով «Նոր փորձ»-ի խմբագրին, Արասխան-
յանը (տես «Մուրճ» 1897 թ. № 10) գրում
էր իր դրախտականում. «... Պուչկինը առ-
նելավոյն այնքան արժեք ունի, վոր նորա հետ
ծանոթանալը հայ հասարակության համար
միանգամայն անհրաժեշտ է։ Պուչկինի ունե-
լիստական բանաստեղծության հմայքի դեմ
կատարելապես անդոր են պ. Գնունու առաջ

փական գրական գործունեյության
հետ միաժամանակ։

Դեռևս 1890-ական թվականների
վերջում մենք գիտենք, վոր Ալեք-
սանդր Ծատուրյանը նպատակ էր ու-
նեցել հրատարակել ուրա Բանաս-
տեղծների հայերեն սեփական թարգ-
մանությունների մի ժողովածու, վո-
րի մեջ գլխավոր տեղը պետք է հատ-
կացված լիներ Ա. Ս. Պուչկինին։

Իկրած այն ցիտատները, վորոնցով Պուչկինը
յուր թեթև վերաբերմունքն է ցույց տվել
դեպի կյանքը, պոեզիան, ամբողջ։ Մեր
կարծիքով ավելի շնորհապարտ թեմա կլիներ
զրել այն մասին, թե Պուչկինը, չնայած իր
բոլոր պակասավոր հայացքներին, այնուա-
մենայնիվ կարգացվում է և դեռ շատ տա-
րիներ կարգացվելու յե, քան առհաս-
ղըստության մեջ ընկած՝ շտապել Պուչկինի
դեմն առնելու հոգսը քաշել, քանի վոր
Պուչկինը մեղանում բնավ հափշտակության
առարկա չէ։

(Արասխանյանը այստեղ պատասխանում է
Գնունու, չափազանցության հասցրած դժա-
հատականին՝ Պուչկինի հայ գրականության
մեջ ունեցած դերի վերաբերմամբ։ Ս. Հ.)։

Սակայն, ինչպես յերևում է, չկարողանալով այդ ժամանակ ի կատար ածել իր մտադրությունը, հայ պարբերականներում ցրված Պուշկինից կատարած նրա թարգմանությունները, Հ. Հովհաննիսյանի և Կ. Կրասիլնիկյանի թարգմանություններին հետ միասին մտնում են Թիֆլիսի հայոց Հրատարակչական Ընկերության կողմից Բազմում 1899 թվին լույս տեսած և բանաստեղծի ծննդյան հարյուրամյակի հիշատակին նվիրված «Քնար Ա. Ս. Պուշկինի» ժողովածուի մեջ:

Այստեղ մասնավորելով խոսքը Ա. Ծատուրյանի, Հ. Հովհաննիսյանի, Հ. Թումանյանի թարգմանություններին մասին, ցանկանում ենք միաժամանակ համառոտ կերպով և ընդհանուր դժբերով կանգ առնել այն ընդունելություն վրա, վոր դտավ Պուշկինը մեր գրականության մեջ 1890-ական թրվականների վերջից մինչև 20-րդ դարի առաջին քսանամյակը՝ այսինքն մինչև Հոկտեմբեր և Նոյեմբեր:

Ա. Ծատուրյանի թարգմանու-

թյունները չափ են: Նա թարգմանել է և՛ Տուրգենևի «Արձագ բանաստեղծությունները» (1895 թ. Մոսկվա), և՛ Նեկրասովի յերկերը, և՛ Պլեչևեովին, և՛ Կոլցովին, Նիկիտինին, Լերմոնտովին, Պուշկինին ու այլոց: «Ռուս բանաստեղծներ» խորագրով լույս են տեսել նրա թարգմանություններից յերկու հատոր, վորոնցից առաջինի մեջ ամփոփված են միմիայն Պուշկինի և Լերմոնտովի յերկերը (Մոսկվա, 1905 թ.):

Առանձնապես ուշադրաւ են Պուշկինից նրա կատարած թարգմանությունները, վորոնք Ծատուրյանին դարձնում են ուս բանաստեղծի առաջնակարգ թարգմանիչներից մեկը հայ գրականության մեջ:

Ծատուրյանը առաջինը յեղավ, վոր համեմատած նախորդների հետ, իր թարգմանություններով դալիս երավելի լայն րաց անելու Պուշկինի լիրիկայի դոները հայ ընթերցողի առաջ:

Նա ընդարձակեց Պուշկինի ստեղծագործության չրջանակները հայ գրադանության մեջ: Սրանով Ծա-

տուրյանն ոժանդակում եր հայ ընթերցողին վերանայելու իր միակողմանի այն պատկերացումը Պուշկինի մասին, վորը նա կարող եր կազմած լինել նախորդ թարգմանիչների աշխատանքի հետևանքով: Բանաստեղծի ստեղծագործության խորը, կապակցված ու բաղմակողմանի ուսումնասիրության բացակայությունը, դեպի Պուշկինն ունեցած բացասական ու ժխտական մոտեցումը, Պուշկինին ընթացիկ մոմենտի սրահանջներին հարմարեցնելու ձգտումը — այս ամենն, անչուչտ դժգոհացնում ելին նրա դեմքը մեր գրականության մեջ, իջեցնում և նսեմացնում նրա մեծահարուստ քնարերգության արժեքը հայ ընթերցողի աչքում: Փաստ ե, վոր նրա քնարական ստեղծագործությունները, շատ չնչին բացառությամբ՝ այն ել շատ դեպքերում «աղբայնացված», ծանոթ ելին ալլ սակավաթիվ ընթերցողներին, վորպես «մաքուր արվեստի» դործեր: Ասել թե նման մի քանի դործեր Ծատուրյանն ամենեվին չի թարգմանել —

չի կարելի: Բայց տեսեք թե Պուշկինի զանազան տարիներին գերված ի՞նչ յերկեր և նա թարգմանում: «Հրեշտակ» (1827 թ.), «Յես կարծում եյի» (1835 թ.), «Աչնան առավոտ» (1816), «Անշար» (1823), «Ո, վարդ աղջիկ» (1820), «Բաղձանք» (1816), «Կովիկա» (1829), «Փոթորիկ» (1825), «Թե չըջում եմ» (1829), «Վերածնունդ» (1819), «Թռչնիկ» (1823), «Կալանավոր» (1822), «Ծաղիկ» (1828), «Մարգարե» (1826), «Բլբուլ» (1827), «Փառքի տենչը» (1825), «Ռոմանս» (1814), «Վերջին ծաղիկներ» (1825), «Թալիսման» (1827), «Կյանքի սալակը» (1823), «Հավերժահարս» (1819), «Յերկու սուպետ» (1830), «Դու հեռավոր» (1830), «Պոետ» (1827), «Առակ» (1829), «Ամպ» (1835), «Գյուղ» (1819), «Շո՛ւտ անցան» (1818), և վերջապես մի հատված «Բախչիսալայի շատրվանը» պոեմից (1822):

Ընդգծելով թարգմանված այս յերկերի կարևորությունը հայ ընթերցողի համար, չի կարելի հատկապես

չխոսել այն մասին, մոր Ծատուրյանը առաջին անգամ մեր գրականութեան մեջ, բացի Պուշկինի մի շարք կարեւոր յերկերից, հայերեն հնչեցրեց նաև մեծ բանաստեղծի «Գյուղ» և Չապեկեին նվիրված, սակայն ինչ-ինչ պատճառներով Ծատուրյանի թարգմանութեամբ «Շուտ անցան» վերնադրված չափածո գրվածքները: Առաջին անգամ հայ ընթերցողը կարող եր կարդալ Պուշկինի այս տողերը՝

Արցունքի առաջ խապաւ կուրացած,
Սառն ու խուլ վրէկ դառն

Հառաչանքի,
Բիրտ աղախությունն կույր բախտից
ընտրված,

Առանց ըղդացման, առանց որենքի,
Այստեղ իշխում է ձեռքին դաւադան,
Յեւ բռնի դարձնում իրան

սեփական՝
Խեղճ յերկրագործի թե՛ ինչք, թե՛
վաստակ,
Տուն, տեղ ու արդյունք, ուժ ու
ժամանակ:

Յե՛ւ դորձն ոտարի, է՛ դուժանն
ոտար.

Մեջքը կորացրած, լախտին
հրնադանդ՝

Այստեղ հերկում է ճորտությունն
անճար

Անողոք տիրոջ հողին արդավանդ:
Այստեղ ամենքն էլ ծանր լծի տակ,
Մինչև մահի դուռ տանում են
կրճքում

Յերկյուղից սպանված հույս,
հակում, փախաղ.

Այստեղ նորատի կույսերն են
ծաղկում

Պիղծ չարագործի վախճ ու մոյար
հաճույքի համար:

Իսկ Չապեկեին նվիրված բանաստեղծության մեջ Պուշկինն ուղղակի խոսում էր ինքնակալության տապալման մասին:

Հավատա՛—կըղա՛, կըղա՛ անկասկած,
Շողալա այդը բախտաբեր դարնան.
Յեւ հայրենիքը քրնից սթափված,
Ինքնակալ ուժի բեկորների վրան,

Կը գրոչմե, բնկե՛ր,
Անունները մեր:

Թեև շատ ուշ, բայց Ծատուրյանը բարձր գնահատելով Պուշկինի տաղանդը, գիտակցելով նրան ավելի բազմակողմանի ներկայացնելու կարիքը, տեսնելով իր չրջապատում Պուշկինի հետ ավելի ջերմ հանգիստումներ ունենալու համար ստեղծվող պարարտ հողը, գալիս եր հայ ընթերցողի աչքում մի վորոշ չափով ավելի ճիշտ պատկերացում ստեղծելու ուսում բանաստեղծի քնարերգության մասին:

Վորպես թարգմանիչ Ծատուրյանը համեմատած նախորդների կույտուրայի հետ, տալիս եր ավելի բարձր վորակի թարգմանություններ: Նրա թարգմանած յերկերի մեջ այլևս իսպառ բացակայում է Պուշկինի բացարձակ ու գիտավորյալ աղավաղումը և այլակերպ ոգտադործումը: Ծատուրյանն ուղղակի մոտեցավ իր դործին և գտնվեց շատ ավելի բարեխիղճ ու պատասխանատվության ավելի բարձր գիտակցությամբ գինված, քան այլ թարգմանիչներն

անցյալում ու նույնիսկ նրա ժամանակ¹⁾:

Սակայն մենք պարտավոր ենք յերկու կարգի գիտողություններ ևս անել Ծատուրյանի թարգմանությունների մասին: Վորքան ևլ առավելություններ ունենա Ծատուրյանը, այնուհանդերձ, այժմ արդեն ակնհայտ է, վոր նա համապատասխան չափով չի կարողացել վերարտադրել Պուշկինի բանաստեղծության լեզվի մեծ պարզությունը, յերաժշտականությունը, չափը, ռիթմը: Ընթերցողը գլում է, վոր հայոց լեզվի զարգացումը Ծատուրյանին հետ թողեց և այսոր յեթե դուք նրա թարգմանություններն ընթերցելու փորձառություն չունեք, նրանք ձեղ տեղ-տեղ կոշտ ու բռնադրոսիկ են թվում: Ել չենք խոսում տեքստային մի շարք

1) Դեպի Պուշկինի յերկերի թարգմանությունն ունեցած պարտականության այդ գիտակցության մասին է խոսում Ծատուրյանը Նար-Դոսին դրած նամակներից մեկում:

անճշտություններն ու այն մասին,
վոր Պուլկինի՝ իրեն տեքստը, ընդ-
հանուր պուլկինադիտության տեքս-
տովդիայի զարգացման հետեանքով,
վորոչ մասերով զգալի նորություն-
ներ և վերախմբագրություններ և
ընդունել, վորոնք Մատուրյանին այն
ժամանակ և այն պայմաններում կա-
րող էյին հայտնի չլինել:

Այս մեկ:

Յերկրորդ մեր դիտողությունը վե-
րաբերում է Մատուրյանի թարգ-
մանությունների այն կողմին, յերբ
Պուլկինի հայերեն թարգմանություն-
ներն իրենց լեզվական բառապաշա-
րով և լեզվական ֆակտուրայով
տեղ-տեղ հնչունակցվում են Մատուր-
յանի՝ իրեն բանաստեղծություննե-
րում արտահայտված ազգայնական
տրամադրություններին ու խոհերին:
Այսպես, որինակ, Պուլկինի «Գլուղ»
բանաստեղծության մեջ չի դործա-
ված ազգ բառը: Մատուրյանը ժողո-
վուրդն ազգ դարձնելով և բառակոն
համապատասխան կոմբինացիա կա-

տարելով, ստեղծել է այսպիսի տո-
ղեր՝

...Արդյոք կը տեսնե՞մ աչքով

Յես մի որ իմ աղբն աղատ,

անհալած...

Ավելացրեք սրան նաև այն, վոր
Մատուրյանը սեփական մտահղաց-
մամբ դործածելով «սուրբ աղատու-
թյուն», «սրբաղան կոչ», «հայրե-
նիք» փոխանակ «Ռուսաստան» (և
հայրենիքը քնից սթափված—Մա-
տուրյան Россия вспрянет ото сна
Պուլկին)

և այլ արտահայտություններ ու կտե-
սներ, վոր Պուլկինը ներքուստ, զաղ-
տազողի դալիս եր նմանվելու Մա-
տուրյանին:

Այստեղ ել արտահայտություն և
գտել թարգմանության դասակար-
գայնությունը:

Նույն «Քնար Ա. Ս. Պուլկինի»
ժողովածուի մեջ լույս են տեսել
Պուլկինից կատարված Հ. Հովհան-

նիսյանի Թարգմանությունները՝ «Անավարտ պատկեր», «Զեզ չեմ ամուսնում» և «Պոետին»։ Հետագայում Հ. Հովհաննիսյանը դրանց թվին ավելացրեց նաև այս Թարգմանությունները՝ «Ո, վարդ աղջիկ» և «Աղմկալից փողոցում»։ Պետք է ասել, վոր չնայած Հովհաննիսյանի Պուշկինի հանդեպ ունեցած մեծ հարգանքին և սիրուն, նրա կատարած Թարգմանություններն անանձնուպես նորություն չեն լինել հայ գրականության համար։ Նկատելի է, վոր Հովհաննիսյանը վերադարձել էր այնպիսի յերկերի, վորոնք հայ ընթերցողին արդեն հայտնի էին։ Նա չկատարեց Ծառուբյանի դերը։ Հովհաննիսյանը Պուշկինին հայ ընթերցողին ներկայացնում էր վերին աստիճանի միակողմանի և խիստ սուբյեկտիվորեն հասկացված։ Թարգմանություններն ել փայլուն չեն լին։

Բայց միանգամայն այլ է Թումանյանը, վորպես Թարգմանիչ։ Կլասիկ սրետը վարպետ դուրս յեկավ նաև Թարգմանության մեջ։ Ահա ինչու

Թումանյանի Թարգմանությունները շարունակաբար կարդացվել են և դրավել դրականագետների ու ընթերցողների ուշադրությունը։

Հատկապես նրա դեպի Պուշկինը և Լերմոնտովն ունեցած վերաբերմունքը յեղել է չափազանց խորը։ «Ռուս բանաստեղծները» և գլխավորապես «Պուշկինն ու Լերմոնտովը» Թումանյանին «միշտ ավելի հարադատ մտն են թվացել, քան թե մեր հայ բանաստեղծները»¹⁾ (խոսքը 60-ական թվականների հայ պոետների մասին է)։ Յուրի Վեսելովսկուն ուղարկված միևնույն այդ պատասխանի մեջ Թումանյանը խոսում է դեռևս աչակերտական տարիներին դեպի Պուշկինի «Պարտավա»-ն, «Գնչուները», «Ուղի յերդը», «Զբրահեղձը», «Զմեռվա իրիկունն» ունեցած մեծ սիրո մասին։ Հենց այդ սերը և հարադատությունը դեպի այդ գրվածքները, Թումանյանին

¹⁾ Տես՝ Ю. Веселовский — Русское влияние в сов. армянской литературе, № 22, Москва, 1909 г.

ստիպել են թարգմանել Պուշկինի նույն և այլ յերկերից մի քանիսը՝ «Ուլեդի յերգը», «Ջրահեղձը», «Ջրմեռվա իրիկունը», մի հատված «Վիլսոնի ժանտախտի պահին» (Илир во время чумы) գրվածքից (Մերերի յերգը), «Յեթե իրավ ե, վոր գիշերները» և «Ռոմանս»:

Թումանյանի յերկերի զանազան ժամանակներ լույս տեսած ժողովածուների մեջ բոլոր այս թարգմանությունները միասին գտնել չի կարելի: 1892 թվին լույս տեսած նրա բանաստեղծությունների յերկրորդ հատորում տպագրված ե «Ռոմանսի» թարգմանությունը, վորը բանաստեղծի կողմից այլևս չի վերահրատարակվել: Պուշկինի ծննդյան հարյուրամյակի առթիվ, 1899 թվին, նա տպագրություն է հանձնում «Ուլեդի յերգը» և «Ջրահեղձը»: 1908 թվին Բաղվում լույս տեսած բանաստեղծությունների ժողովածուի մեջ Թումանյանը դետեղում ե «Յեթե իրավ ե, վոր գիշերները» բանաստեղծության վոչ լրիվ թարգմանությունը:

Այնուհետև դալիս են «Չմեռվա իրիկունը» և վերոհիշյալ հատվածը:

Անմիջապես աչքի յե ընկնում այն ընտրությունը, վոր կատարել ե Թումանյանը Պուշկինի յերկերից:

Թումանյանը, ինչպես նաև Ծատուրյանը, իր թարգմանություններով դալիս եր թարմացնելու Պուշկինին մեր գրականության մեջ և ցույց տալու ռուս հանճարեղ բանաստեղծի անսպառ ստեղծագործության մի քանի գոհարներ ևս: Մեծ վարպետությամբ կատարված այդ թարգմանությունների մեջ կային, ինչպես տեսանք, վոչ միայն «Ռոմանսը», «Չմեռվա իրիկունը», այլ և «Ուլեդի յերգը», «Ջրահեղձը», վորոնք հարադատության և մոտիկության, հեռավոր, սակայն արտաքուստ աննշարելի թելերով կապված եյին Թումանյանի ստեղծագործության արյան և կյանքի հետ: Պատահական չեք, անշուշտ, այն բացասական վերաբերմունքը, վոր մշակել եր Թումանյանը 60-ական թվականներին հայ բանաստեղծների մասին, վորոնց հետ վոչինչ ընդհանուր չունեք

նա: Մինչդեռ Պուշկինի «Ունդի յերս
դը», «Ջրահեղձը», «Զմեռվա իրի-
կունը» դալիս ելին միաձուլվելու
Թումանյանի բանաստեղծական ամե-
նահատկանշական ու ամենարնորոշ
առանձնահատկությունների հետ: Ե-
պիքականություն, ժողովրդական ըս-
տեղծադործություն ու պատմու-
թյուն, կոնկրետ սյուժետ, մարդ,
ահա թե ինչ և ուղղում նա տեսնել
Պուշկինի յերկերի մեջ: Պուշկինը
լիապես բալարարեւ է նրան, իսկ
Թումանյանը մեծ սիրով է պատաս-
խանել «իր հարադատին ու մոտի-
կին»՝ տալով գերազանց թարգմա-
նություններ:

Սակայն մի կետում հատկապես
զարմանալի կերպով խաչաձևվել է
Պուշկինի և Թումանյանի բախտը,
մի չափազանց նշանակալից և անմո-
ռաց կետում: Հետաքրքրական չատ
կողմեր ունի այդ դեպքը, բայց ա-
մենահետաքրքրականն այստեղ
այն է, ինչ որ Պուշկինը անցնելով 19-րդ
դարի պատմության բովով, հասնե-
լով 20-րդ դարը, ժամանակների մեջ
թափանցող իր աչքերով կարողացել

է լեղու գտնել Անդրկովկասի պրո-
լետարիատի սլաքարի հետ: Այս մի
կողմից: Թումանյանը գալով դյու-
ղադրական դրականությունից, գալով
ցարական դադութ Հայաստանի հեղ-
ձուցիչ իրականությունից, դեպքերի
բերումով իր վրա յե վերցրել Պուշ-
կինին հայերեն լեզվով հեղափոխու-
թյան դործին մասնակից դարձնելու
պարտականությունը:

Մեր խոսքը Պուշկինի հռչակավոր
«ВОЛНОСТЬ» ողայի ութերորդ
ութնյակի առաջին չորս տողի Հ.
Թումանյանի կատարած թարգմա-
նության մասին է: Ահա թե ինչ է
գրում այդ մասին ընկեր Ս. Յերգնի-
յանն իր հիշողությունների գրքում՝

«Մեր կազմակերպությունը
պատրաստվել է թիֆլիսում մա-
յիսյան ցույցը կազմակերպելու:
Ստեփանը (Ստեփան Շահումյա-
նը. Ս. Հ.) մեզանում կրակոտ
ազիտատոր էր և գիշեր ցերեկ
նախադատրաստական աշխա-
տանք էր կատարում այս ուղ-
ղությամբ: Յուլյից մի քանի օր
առաջ դադարեի հավաքվել ենք

ընկեր Արչակ Զոհրարյանի բնա-
կարանը Ստեփան Շահումյանը,
Ա. Զոհրարյանը, Ա. Սումարյա-
նը, Դ. Շահվերդյանը, Ռ. Դաշ-
տոյանը, յես և մի քանի ընկեր-
ներ: Խոսակցության նյութը
հրատարկվելիք թուուցիկի հարցն
էր: Հանկարծ Ստեփան Շահում-
յանը հանում է դրպանից Պուշ-
կինի անլեզալ մի վոտանափորը,
առաջարկում թարգմանել, փոք-
րիկ թերթիկների վրա հաղա-
րավոր որինակներ տպագրել և
ցույցի ժամանակ տարածել: Մեր
տպագրական դործի վարպետնե-
րը՝ Աչոտ Սումարյանը և Ռ.
Դաշտոյանը հայտնում են, վոր
հնարավոր է տպագրել: Վորոշ-
վում է ընդունել Ստեփանի ա-
ռաջարկը. սկսվում է ամենա-
դժվարին դործը: Անհրաժեշտ էր
բանաստեղծությունը թարգմա-
նել: Մեր մեջ չկար վոչ
մի բանաստեղծ, վոր կարո-
ղանար այդ բանաստեղծությու-
նը հանդերձ թարգմանել: Ամեն
մեկիս վերցնում ենք և սկսում

վործել մեր բանաստեղծական
տաղանդը. բան չի դուրս դա-
լիս: Ամենից համեմատաբար լավ
թարգմանում է Ստեփանյանը.
ուզում եյինք այդ տպել, թեե
նա ել մի բան չէր, բայց յիղած-
ներից լավն էր: Սակայն Ստե-
փանը չի համաձայնվում և ա-
ռաջարկում է անմիջապես ու-
ղարկել Հովհաննես Թումանյա-
նին և խնդրել թարգմանել: Լավ
չեմ հիշում ի՞նչքը դնաց, թե՞
Դաճուչ Շահվերդյանը, և ահա
տասնեհինգ րոպեյից հետո ստա-
նում ենք հետևյալ կոկիկ թարգ-
մանությունը՝

Ատում եմ քեզ և քո դահը,

Միահեծան դոռող ցար,

Քո և քո վորդոց մահը

Պիտի տեսնեմ անպատճառ:

Տպում ենք և հաղարներով տա-
րածում ցույցի ժամանակ¹⁾:

Ընդառաջելով մեր հետաքրքրու-

1) Տես՝ Ար. Յերզնկյան— Հուշեր, առա-
ջին դերք, Պեհհրատ, 1927 թ.:

Թյանն ընկեր Դ. Շահվերդյանը
միևնույն այդ դեպքի մասին պատ-
մեց հետևյալը՝

«Դեպքը տեղի յե ունեցել 1903
թվին, Թիֆլիսում: Նախապատ-
րաստութուն եր դնում կաղմա-
կերպելու մայրամեկյան ցույցը:
Մենք հավաքվել էինք մեր ըն-
կերներից մեկի մոտ, լավ չեմ
հիշում թե ո՞ւմ: (Հավանորեն
ընկ. Արշակ Զոհրաբյանի մոտ):
Պրեխանովի «Комментарии к про-
екту программы» РСДРП
բողոքների վերջում բերված Պուշ-
կինի մի քառյակը հարկավոր եր
թարգմանել: Փորձեր յեղան
Պուշկինի քառյակը թարգմանե-
լու: Սակայն, յերբ դրական ար-
դյունք չստացվեց, չեմ հիշում
թե ո՞ւմ առաջարկությամբ վո-
րոշվեց քառյակը տանել Թու-
մանյանին և խնդրել նրանից
թարգմանել: Գնացողը յես էյի:
Ճաշից հետո յեր: Թումանյանը
քնած եր, յերբ յես յեկա: Կինը
դուռը բաց արեց: Յես ասացի,

վոր ուղում եմ տեսնել Թուման-
յանին: Կինը՝ թե քնած ե: Պըն-
դեցի, պատճառաբանելով, վոք
դործը կարևոր ե: Այդ ժամանակ
կինը քնաց Թումանյանին արթ-
նացնելու, իսկ յես մտա նրա ա-
ռանձնասենյակը: Մի յերկու բո-
պե հետո քնաթաթախ աչքերը
տրորելով, ներս մտավ Թուման-
յանը և տեսնելով ինձ, յերեմի
մտածեց, վոր մի բան կա. արա-
դությամբ հարցրեց՝ «Հը, ի՞նչ
կա, իսեր ըլի»: Յես հայտնեցի դա
լուս նպատակը, իհարկե առանց
ստելու թե յե՞րբ ե տեղի ունենա-
լու ցույցը և այլ մանրամաս-
նություններ: Նա վայրկենաբար
թարգմանեց: Բնադիրն այս եր՝

Самовластительный злодей,
Тебя, твой трон я ненавижу,
Твою погибель, смерть детей
Я с злобной радостью увижу!..
Ստացվեց հետևյալ թարգմանու-
թյունը՝
Ասում եմ քեզ և քո դահլ

Միահեծան դոռող ցար—
Յեւ թո վորդոց ու թո մահը
Պիտի տեսնեմ անպատճառ:

Յես նկատեցի, վոր Պուշկինի
С 300413 РАЗОУНО բառերը
հայերեն չեն թարգմանված: Նա
ասաց թե բանաստեղծը «ЛОДА»
չպետք է ունենա, վոր նա բարձր
վեհ պետք է լինի և այդ պատ-
ճառով էլ այդ բառերը բաց է
թողել: Վերադարձա, ուրա-
խության չափ չկար: Հատկա-
պես շատ եր ուրախացել կամոն,
վորը միաժամանակ շատ եր բար-
կացել, յերբ դրաշարը թարգմա-
նության մեջ յերրորդ տողը չա-
րել եր այսպես՝

Քո և թո վորդոց մահը—
և այլն:

Թոուցիկը տպադրվեց դադա-
նի տպարանում և տարածվեց
ցուլցի ժամանակ: Թումանյանի
վրա այս դեպքը մեծ և լավ ազ-
դեցություն եր դործել:

Պրոլետարիատի հեղափոխական
պայքարը միևնույն ջրապտույտի մեջ

եր վերցրել Պուշկինին և Թումանյա-
նին: Դեպքը չափազանց խորիմաստ
է և նշանակալից: Դա մի բախտավոր
մոմենտ է մեր դրականության պատ-
մության մեջ:



Ալեքսանդր Ծատուրյանի, Հով-
հաննես Հովհաննիսյանի և Հովհան-
նես Թումանյանի մասին մեր համա-
ռոտ խոսքն ասելուց հետո, այժմ
կրկին անդրադառնանք «Մուրճ»-ին
և տեսենք թե մինչև դադարելը ի՞նչ
դիրք է ունեցել նա Պուշկինի հան-
դեսը: Սկսելով իր գոյության նոր
չրջանը, «Մուրճ»-ը հետեւողականո-
րեն չկարողացավ վարել թարգմանա-
կան իր քաղաքականությունը: Ա.
Արաքսյանյանի դիրքերն այժմ, կար-
ծես թե, վերանայվում են և
«Մուրճ»-ի նոր չրջանը նոր խոսք է
ուղում բերած լինելու և յեվրո-
պական դրականություններից թարգ-
մանություններ կատարելու մասին:
Հոգեվաճներից մեկում կարդում ենք՝

«Թարգմանությունն է ամենա-

գլխավոր միջոցը ոտարադղի մտավոր կյանքին (ծանոթանալու համար)․ ուլքեր ուղղում են ամեն կերպ սահմանափակել թարգմանական զբաղանության ասպարեզը իրրե թե ինքնուրույնի համար տեղ բաց անելու համար, նույնքան հիմնավոր վարված կլինեյին, յեթե բամբակ կոխեյին մի յերեսայի աղանջը, վոր-սլեսդի ավելի շուտ բացվի լեզուն...: Այն աղզը, վոր չի կարողանում յուրացնել ուրիշ ազգերի քաղաքականությունը, այժմ դառնում է դրանից վոչ թե ինքնուրույն, այլ ամուլ»:

Տեսնենք թե ի՞նչպես է այս տեսակետն անդրադառնում Պուշկինին թարգմանելու գործի վրա: Բացի այն, վոր «Մուրճ»-ում տպագրվող քննադատական հոդվածներում հիշատակություններ են լինում Պուշկինի մասին, կամ համեմատություններ ու զուգահեռներ նրա հետ, «Մուրճ»-ի հրատարակությամբ 1902 թ. և Կ. Կրասնիլնիկյանի թարգմանությամբ լույս է տեսնում Պուշկինի

«Հավերժահարսը» դրաման: Նույն Կրասնիլնիկյանի թարգմանությամբ «Քնար Պուշկինի» ժողովածուի մեջ տպագրված է յեղել «Քարե հյուրը» դրվածքը: Յերկու այս յերկերի թարգմանությամբ Կրասնիլնիկյանը հարստացնում էր մեր դրականությունը Պուշկինի նշանակալից և արժեքավոր դրվածքներով: Այդ աշխատանքը դրական աշխատանք էր: Սակայն հետագայում առանձին հետաքրքրություն չի ցուցաբերում «Մուրճ»-ը դեպի Պուշկինը: Մի զույգ թարգմանություններ... (տես՝ «Մուրճ» 1904 թ. «Ամպիկ» և 1907 Նճ 1 «Մարդարե» թարգ. Լ. Մանվելյանի): Նոր ժամանակներ, նոր յերգեր: «Մուրճ»-ը սկսել էր մոռանալ Պուշկինին:

Յեթե 1880-ական թվականներին միայն փորձ յեղավ թարգմանել Պուշկինի հեքիաթներից մեկը, ապա յերկրորդ փորձը պատկանում է Աթաբեկ Խնկոյանի գրչին, վորը «Հասկեր»-ի 1908 թ. նոյեմբերի համարում հրատարակեց «Տերտերն ու իր Բալդի ծառան» հեքիաթը: Աթաբեկ Խնկո-

յանն ե դարձյալ, վոր շարունակելով Պուշկինի հեքիաթների թարգմանության դործը, տպագրության ե հանձնում նաև մի ուրիշ հեքիաթ՝ «Բնած դշտուհին և յոթը քաջերը» (Թիֆլիս 1911 թ.): Ճաշակով և խնամքով կատարված այս թարգմանություններից բացի, Սնկոյանն ունի գրվածքներ՝ գրված «Ըստ Պուշկինի»¹⁾:

Յեթե կանդ չառնենք յերկրորդական, յերրորդական կարգի, աննշան նյութերի քննության վրա, կարող ենք ավարտած համարել մեր խոսքը մինչև Հոկտեմբեր և Նոյեմբեր Պուշկինից կատարված թարգմանությունների մասին: Դաշնակցության «սլետականության» որով ծիծաղելի չե անգամ ասել, թե ինչ վոր հետաքրքրություն ե յեղել դեպի Պուշկին-

1) Բ. Զարգարյանը «Մեղրադետ»-ում արտատպելով Պուշկինի հայերեն գրական լեզվով կատարած թարգմանությունները, յենթարկում ե նրանց արևմտահայ բարբառային շտկումներին:

նը: Մաուդերիզմը բնաջինջ եր արել նաև Պուշկինին:



Ի՞նչ յեզրակացությունների կարելի չե հանդել Պուշկինի՝ մեր դրականության մեջ մինչ խորհրդայնացումն անցած ճանապարհի մասին:

Արդեն ասել ենք՝ Պուշկինի բախտը հայ դրականության մեջ կապված ե յեղել այդ դրականության բախտի հետ: Կնշանակե թե այդ դրականության շահերով ու խնդիրներով ել, նրա դրությամբ ու ժամանակին ունեցած հեռանկարներով, հասարակական կյանքում մղվող դադարաբաշխող սպայարի կոնկրետ վիճակով ել պետք ե բացատրել Պուշկինի հաջողությունը կամ անհաջողությունը զանազան շրջաններում, զանազան ժամանակահատվածներում:

Թե ի՞նչպիսի կյանք ե ունեցել Պուշկինը հայ դրականության մեջ— այս հարցին կարելի չե պատասխանել նույն այդ դրականության պատմությունը ճիշտ լուսաբանելով, սու-

րես կողմնակի թվացող հարցը փոխադրելով պատմութեան խորքը, կանգնելով պատմական կոնկրետ հողի վրա:

Ռուս դրականութեան ու կյանքի համեմատութեամբ հայ գրականութեանն ու կյանքը շատ ավելի հետամնաց եր ու կապված սեփական անցյալի հետ, տանջմաներով դարի 30-ական թվականներին, յերբ մուտք ե գործել Պուշկինը մեր գրականութեան մեջ, արդեն յենթակա ռուսական միապետութեանը: Տեսանք, վոր հայ հասարակական կյանքում, կըդերա-ավատական տարրերի տիրապետութեան չըջանում՝ 1830—40-ական թվականներին Պուշկինին հայացնում էին դարար լեզվով, այդպիսով ռուս բանաստեղծին փոխադրելով հայ իրականութեան մեջ մի քանի տասնամյակով իջեցնում դարացման այն մակարդակը, վորին հասել եր Պուշկինը լինելով ռուս բանաստեղծ:

Այս շրջանում պարզ ե, վոր Պուշկինը մեռած եր հայ ժողովրդական ընթերցողի համար:

Հայկական դադութներում, ռուսահայ իրականութեան մեջ բուրժուական տարրերի դարդացման, բուրժուական լիրերալ մտքի առաջացման, հասարակութեան խորը չերտավորման հետեանքով իր դոյութեան նոր փուլը թեակոխած և արդեն աշխարհականացող դրականութեանը, հասկանալի պատճառներով անհամեմատ ավելի լայն ասպարեզ եր ստեղծում կաղծավորվող իր նորագույն կադրերի համար ոտարադղի դրականութեաների և առաջին հերթին ռուս դրականութեան ողտադործման լենդիրը հրահրելու, վորպես կենսական խնդիր:

Փաստերը ցույց են տալիս, վոր 50—60-ական թվականներին Պուշկինը մեղանում թեև լայն ընդունելութեան չի դտել, բայց և այնպես հանազակ ու ողտադործվել ե՝ յենթարկվելով այդ չըջանում արդեն տիրապետող դարձող բուրժուական հրապարակախոսների, գրողների ու առավելապես պոետների սեփական դադախարհան դատակարգային «բումահանութենքին», խմբադրվելով ու

վերախմբադրվելով՝ համաձայն նը-
լանց ներքին պահանջների ու կա-
րիքների: Չնայած կուլտուրայի մեծ
պակասին, չնայած հայ նոր պոեզիա-
յի աղքատ և դրականապես անդար-
դացած լինելուն, չնայած այդ ամե-
նին — յեղնելով իրենց ժամանակի
պատվերից, յեղնելով նացիոնալիս-
տական իդեոլոգիայի դերքերից, սո-
ցիալական ինքնուրույն շահերից, հայ
պոետները զանախում եյին Պուշկի-
նի մեջ տեսնել նրա ստեղծագործու-
թյան օջախ կողմերը, վորոնք ընդու-
նելի կարող եյին լինել նրանց հա-
մար: Այս կապակցութեամբ անհրա-
ժեշտ և հիշատակել այն կարևոր հան-
գամանքը, վոր ուսու իրականութեան
մեջ նույն ժամանակաշրջանում դեպի
Պուշկինը մշակված վերաբերմունքն,
անշուշտ, իր ազդեցութեանն է դոր-
ծել հայ բանաստեղծների վրա: Յեւ
մենք տեսնում ենք, թե վորքան է
հիրաւի մանրանում Պուշկինը թե
վորքան աղքատ և աղճատված վիճա-
կում է նա ներկայանում թեև արդեն
աշխարհաբար իմացող, բայց դեռևս
անկախ թիւ հայ ընթերցողին: Հե-

տագայում, մինչեւ 90-ական թվա-
կանները, վորքան էլ պակաս լինեյին
թարգմանչական կադրերը, վորքան
էլ նեղ լիներ հայ դրականութեան
հորիզոնը, սակայն շերտավորված
վերաբերմունք դեպի Պուշկինը միշտ
յեղել է: Հատկապես նման վերա-
բերմունքի յե հանդիպում նա 90-ա-
կան թվականներին, յերբ թե ուսու և
թե հայ դրականութեան մեջ Պուշ-
կինը ավելի մեծ ընդունելութեան է
սկսում դանել: Հայ դրականութեան
մեջ դեպի Պուշկինն ունեցած հետա-
քըքրութեանը 90-ական թվականնե-
րին հասնում է իր դադաթնակետին:
Առանձնապես մեծ աշխատանք են
կատարում Ալեքսանդր Օստոլոյանը,
Հովհաննես Թումանյանը և ուրիշնե-
րը: Այժմ ավելի լայն է ներկայաց-
վում Պուշկինի քնարերգութեանը:
Թարգմանվում են յերկեր նաև նրա
արձակից և դրամատիքական ստեղ-
ծագործութեաններից: Յեւ արդու-
նաբերական կապիտալիզմի շրջանում
հայ դրականութեանը, նրա առան-
ձին ներկայացուցիչները, սկսում են
յուրովի մեկնել և ընդունել կամ չըն-

դռնեկ Պուշկինին, նրա ստեղծագործությունը: Ստիպյալ պարզ և, վոր հայ քննադատական, հրապարակախոսական ու գեղարվեստական միտքը յերբեք ել չի կարողացել խորապէս ուսումնասիրել Պուշկինին, բազմակողմանի ըմբռնել նրան, մատնանշել և ոգտագործել այն դանձն ու հարստությունը, վոր ուներ Պուշկինը:

Միապետութեան դեմ մղվող պայքարում Պուշկինը հանդես ե գալիս բոլորովին այլ կողմերով: Սա չափազանց նշանակալից և կարևոր մոմենտ ե մեր գրականութեան անցյալի պատմութեան մեջ:

Պուշկինի հետագա ուղին, 1905 թվից հետո, փայլուն չի յեղել: Իսահակյան, Տերյան, Թեև շատ բարձր են դնահատում նրան, բայց հատուկ աշխատանք չեն կատարում Պուշկինին թարգմանելու և ժողովրդականացնելու համար: Պուշկինի աստղը սկսում ե մարել...

Այսպիսով յերբ մի հայտարարի յենք բերում Պուշկինի թարգմանու-

թյան ասպարիզում բանաստեղծի կենդանութեան տարիներէից մինչև խորհրդայնացումը հայ գրականութեան մեջ կատարված աշխատանքը, ստանում ենք մոտավորապես հետևյալ պատկերը՝

Ըստ գրական սեռերի՝ հայերեն ալիքի շատ են թարգմանված Պուշկինի քնարական յերկերը: Այնուհետև զալիս են պոեմները, հեքիաթները, արձակ յերկերը և ապա դրամատիքական գրվածքները:

Ըստ քարգմանված յերկերի բովանդակութեան և Պուշկինի անցած հտապների հայերեն ալիքի հաճախ են թարգմանվել աշպես կոչված Բայրոնական պոեմներից մի քանիսը, «մաքուր և ինքնանպատակ» լիբիկայի նոուշներ, արձակ յերկերից «Կապիտանի աղջիկը», մի յերկու այլ գրվածք, «Ժլատ ասպետը», «Բարե հյուրը» և «Հալերթահարսը» դրամատիկական ստեղծագործություններից, հեքիաթներ:

Սրանից կարելի յե յեղրականել, վոր Պուշկինի ամենանշանավոր գըր-

վածքները մի մասը բնութագրում էր հեռու
չի թարգմանված, չկա «Յեղեղների Ո-
նեղինը», չկա «Բորիս Գորգունովը»,
չկան չափածո և արձակ շատ հայտնի
յերկեր, Պուշկինը, վորպես քննադատ
և ժողովրդական խոսքի բացակայում
և, ամբողջապես անհայտ և հայերեն
ընթերցողին Պուշկինի նամակագրու-
թյունը:

Տեսնում ենք, վոր 19-րդ դարի և
20-րդ դարի յերկու տատնամյակի
ընթացքում, չնայած մեծ աշխատան-
քին, Պուշկինին վերջի վերջո հա-
մարեցրել են բուրժուական հասարա-
կակարգի պահանջներին, իսկ սրա
հետևանքով հնարավորություն չի
յեղել ճանաչելու նրա դեմքն ամբող-
ջությամբ: Յեւ յեթե նկատի ունե-
նանք այն հանգամանքը, վոր անց-
յալում կատարված թարգմանու-
թյունները մի խոշոր մասը այսօր
կորցրել և իր արժեքը, ավելի պարզ
կլինի մեր անելիքը՝ ազատալը
Պուշկինին աղճատումից ու աղավա-
ղումից, ներկա դարձնել նրան մեր
ընթերցող մասսաներին իր անաղարտ

կերպարանքով, իր ամբողջ վեհու-
թյամբ:

Այսքանը անցյալի մասին:



Խորհրդայնացումից հետո միան-
գամայն այլ եր լինելու Պուշկինի
կյանքը մեր գրականության մեջ:
Ընթանալով զարգացման մի շարք ե-
տապներով, ճոխանալով և հարստա-
նալով, խորհրդահայ գրականությու-
նը, ղինված անցյալի կուլտուրայի
ուսումնասիրության և ոգտագործ-
ման Մարքսի-Էնելնի-Ստալինի հը-
զոր ուսմունքով շատ լայն բաց ա-
րեց իր դռները յեվրոպական, արե-
վելյան և հատկապես ուսսական կը-
լասիկ գրականության առաջ: Թեև
յեղան որեր, յերբ ամենալավ ցան-
կություններից դրդված, Պուշկինին
վրմանք կամենում եյին անտեսել,
նույնիսկ արժեքագրել, սակայն
շատ շուտ անցան այդ որերը և նը-
րանց յեկավ փոխարինելու հարգանքն
ու ամենալուրջ վերաբերմունքը դե-
պի մեծ բանաստեղծը: Յեւ այդ վե-

րաբերմունքը տարածվեց վոչ միայն
 Պուշկինի վրա: Տեսնում ենք, վոր յեւ
 րոպական մի շարք կլասիկ գրողներ,
 ուսական գրականությունից՝ Պուշ-
 կին, Լեւմոնտովը, Գոգոլը, Լ. Տոլ-
 ստոյը, Դոստոևսկին, Տուրգենևը,
 Շչեդրինը, Չեխովը և ուրիշները դրա
 վրա են որբատորե աճող մեր բազմա-
 հաղար ընթերցողների ուշադրությու-
 նը: Այլիկ հարադատ յերկիր, քան մեր
 յերկիրը— կլասիկները չունեն:
 Քննադատաբար ոգտադործելով նը-
 րանց յերկերը, սովորելով նրանցից,
 մեր արձակն ու պոեզիան զգալապես
 աճեցին: Անուբանալի յե նաև Պուշ-
 կինի ազդեցությունը մեր պոեզիա-
 յի վրա: Յեթե մանրակրկիտ և ու-
 չազիր վերլուծության յենթարկենք
 այդ պոեզիայի առանձին ներկայա-
 ցուցիչներ յերկերը, կտեսնենք, վոր
 արդեն վիաստ ե դարձել այդ ազ-
 դեցությունը: Լուրջ փորձեր են կա-
 սարվել խորապես ըմբռնելու Պուշ-
 կինի ստեղծագործությունը, տիրա-
 պետելու նրա պարզության «գաղտ-
 նիքներին», նրա ձևին: Մեր պոե-

զիայի կուլտուրապես ամենաառաջա-
 վոր մասը շրջադարձ կատարեց դե-
 պի Պուշկինը՝ իրեն հետաքրքրող
 պոետական գրական վորոնումների
 պատասխանը նրա ստեղծագործու-
 թյան մեջ ևս գտնելու համար: Այս
 մի կողմից: Ընդհանուր հետաքրքրու-
 թյունը դեպի Պուշկինը շատ մեծ ե:

Պուշկինը յերբեք այնքան ամուր չի
 նստել հայ գրականության մեջ— ինչ
 պես այժմ: Յեւ յերեւի բանաստեղծի
 հանդես ունեցած այդ ամենալուրջ
 վերաբերմունքն ե մասամբ պատճա-
 ւը, վոր թեև անհամար փորձեր են
 յեղել թարգմանելու նրա յերկերը,
 սակայն մինչև այժմ նրանցից քիչ են
 տպագրված:

Մի քանի տարի առաջ Դ. Դեմիրճ-
 յանը թարգմանեց նրա հայտնի բա-
 նաստեղծությունը, առաջին անգամ
 հայերեն լույս տեսավ՝ «Աքսորյալ-
 ներին»: Յեղիշե Չարենցը, ի թիվս
 այլ պոետների, դարձյալ առաջին
 անգամ թարգմանեց Պուշկինի այդ
 բանաստեղծությունները՝ «Ex uncue
 leone m», «Աշխատանք», «Ան-
 վերնադիր» և «Անվերնադիր»: Տիրպան

Հախում յանի թարգմանությամբ լույս տեսան բացառապես «դրամատիկական հատվածները», «Սրբախմանք ժանտախտի պահին», «Մոցարտն ու Սալչերի», «Ժլատ աստերը» և «Քարե հյուր»: Պետհրատը լույս ընծայեց «Դուբրովսկին» (թարգ. Հ. Մաղմանյանի): Իհարկե այս բոլորը վուգմի դեպքում բավարար համարել չի կարելի: Խորհրդային ընթերցողը Պուշկինին պետք է ճանաչի վորակյալ և բաղմաքանակ թարգմանություններով:

Հայաստանի խորհրդային պոեզիայի առաջ մի պատվավոր խնդիր է կանգնած՝ ներկայացնել Պուշկինին նրան արժանի հայերեն քարգմանությամբ: Դա կլինի այն լավագույն դործը, վորով Հայաստանի զբաղանությունը, կմասնակցի մեծ բանատեղծի, արդեն սոցիալիստական մարդկության տիրապետության շրջանին զուգադիպած մահվան հարյուրամյակի հոյերթացումը:





75 4.

С. АРУТЮНЯН
Столетняя жизнь Пушкина в
Армянской литературе
Гиз ССР Армении,
Эривань, 1935 г.

ՀՀ Ազգային գրադարան



NL0328060

14.816